179
L. II. 2

№ 1 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 1 — 1896 — ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 1 № 1

ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվանը 6 բուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՆԵՐԿԱՅ 1896 ԹԻԱԿԱՆԻՆ

24-ՐԴ ՏԱՐԻ **„ՄՇԱԿ“** 24-ՐԴ ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն գիրքով, նոյն պրոգրամայով և նոյն ուղղութեամբ։ Մենք ստանում ենք սեփական հեռագիրներ։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 բուբլի է, տան և մէկ և տան ամսվանը՝ 9 բ., ինն և ութ ամսվանը՝ 8 բ., եօթ ամսվանը՝ 7 բ., վեց ամսվանը 6 բ., հինգ ամսվանը՝ 5 բ., չորս ամսվանը՝ 4 բ., երեք ամսվանը՝ 3 բ., երկու ամսվանը 2 բ., մի ամսվանը՝ 1 բուբլի։

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բաղարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անդադար մաքառում. Փոքր ազգութիւնների դերը. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. «Մշակի» Vade mecum. Ռուսաստանը 1895 թվին. Դատաստանական աշխարհից. Կրթական գործը Կովկասում և Անդրկովկասում. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Ռուսաստանը և Թուրքիան. Բօղբէրիի նամակը. Նամակ Պարսկաստանից. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՕՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նոր տարվայ մաքեր։

ԱՆԴԱԴԱՐ ՄԱՔԱՌՈՒՄ

Ներկայ 1896 տարվայ առաջին օրը մեր հասարակութեան յայտնում ենք մի բուռն ցանկութիւն, որ նա նոր ոյժով և նոր եռանդով առաջ տանի իր անդադար մաքառումը այն բոլոր խոչընդոտների դէմ, որոնք դարերով կիտվել, դիզվել են նրա առաջ խաւարի, ազիտութեան և բնութեան արհաւիրքների շնորհիւ։

Մի հասարակութիւն, երբ ձգտում է դէպի կուլտուրական խելացի կեանք՝ երբէք չը պէտք է յուսահատութիւն պատի նրան, երբէք չը պէտք է սրտերը լքանան, ձեռքերը թուլանան։ Հասարակութիւնը պէտք է գիտենայ, որ մտաւոր և նիւթական բարօրութիւնը ձեռք են բերվում յարատև և անընդհատ գործունէութեամբ, անկեղծ և անձնուէր աշխատանքով։

Կեանքը ստեղծագործութիւն է, կեանքը յոյս է, կեանքը անդադար կռիւ և մաքառում է նպատակին հասնելու համար, և մարդիկ պէտք է լաւ գիտենան, որ բնութեան մէջ երկու մեծ ոյժեր միմեանց դէմ գործում են, որոնցից մէկը քայքայում է և կործանում, իսկ միւսը նորոգում է, վերաշինում, և այդպէս առաջ գնում անդադար։

Ահա մի հեղեղ, որ եկաւ քանդեց ամբողջ մի երկիր, ջրի տակ ծածկեց բազմաթիւ գիւղեր իրանց արտերով և այգիներով։ Մարդիկ կորցրին ամեն բան, բայց նրանք նորից պէտք է սկսեն իրանց տները շինել, իրանց արտերը մշակել, այգիները կարգի բերել։

Ահա մի կատաղի հիւանդութիւն, մի խօլերա, մի ժանտախտ, որ ճարակել է ամբողջ երկիրներ, որ անխնայ կոտորում է և մեծին և փոքրին, և զրկում է ընտանիքները նրանց անդամների կէսից և երեք քառորդից։ Եւ մնացողները, որչափ տխուր և անմխիթար լինեն՝ պէտք է սկսեն նորից վերանորոգել այն, ինչ չար բաղդը աւերել է մրրկի նման։

Ահա ձեզ մի սարսափելի անբերրիութիւն, մի սով, մի յուսահատական մերկութիւն և աղքատութիւն, որոնք առաջ են եկել բնութեան խաղերից և երկնքի բարկութիւնից։ Ի՞նչ է մնում անել։ Օգնել, որ աւերվածը վերականգնի, որ փչացածը կարկատվի և դրսավի։

Կուլտուրական խաղաղ գործունէութեան ճանապարհը շատ ծանր և մաշող ճանապարհ է. բայց նա, ով կամենում է իր համար խելացի մարդկային կեանք պատրաստել՝ պէտք է ոչ միայն չը վախենայ աշխատանքի մեծութիւնից և դժուարութիւնից, այլ աւելի ևս ոգևորվի գործելու, և տասնապակի իր եռանդը և ջանքը մի կողմից նուազեցնելու ասիական խաւարի ոյժը ժողովրդականէ՝ նրանքի վրա, իսկ միւս կողմից աւելացնելու կուլտուրական այն բարիքների թիւը, որոնք պէտք է կազմեն խելացի և արդար կեանքի հիմունքները։

ՓՈՔՐ ԱԶԳՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ

Ներկայումս Եւրոպայի քաղաքական հանգամանքները այնպէս են դասաւորված, որ բոլոր հզօր և մեծ պետութիւնները անընդհատ, անվերջ կերպով զինաւորվում են, իրանց եկամուտների ամենամեծ մասը գործ են ածում սպառազինութեան վրա։

Ի հարկէ, մեծ պետութիւնների այդ ահեղ զիրքը վտանգ է սպառնում մանր, անկախ ազգութիւններին և պետութիւններին։ Նրանք շարունակ այն սարսափելի մաքի ճնշման տակ են, թէ կարող են միանգամայն ոտնակոխ լինել, երբ մեծ և ահեղ, միմեանց հետ մրցող պետութիւնների մէջ պատերազմ ծագի, կամ այդ մեծ պետութիւնները, համաձայնվելով միմեանց հետ, կարող են այս կամ այն փոքր ազգութեան և պետութեան գոյութեան վերջ դնել։

Ի՞նչ պէտք է անեն փոքր պետութիւնները այդ ճնշող մաքից ազատվելու համար։

Յայտնի նօրվէգիացի գրող Բիէրնսօն այդ հարցի առիթով նորերս խօսած իր մի ճառի մէջ յայտնում է, որ ներկայումս աշխարհիս մեծ և փոքր պետութիւնների առաջ միայն երկու ալտէրնատիվ կայ,— կամ սպառազինութիւն, կամ ծագած վէճերը՝ խաղաղասիրական և փոխադարձ համաձայնութեամբ վճռելու դաշնադրութիւն։ Այս վերջին պայմանը մանր պետութիւնների և ազգութիւնների փրկութեան միակ միջոցն է, որովհետև առաջին պայմանը, սպառազինութիւնը, նրանց համար ոչ մի օգուտ չէ կարող բերել։

Սակայն այստեղ ծագում է մի դժուար հարց. ո՞վ պէտք է մոցնի, օրինակ, Եւրոպայում՝ վէճերը փոխադարձ համաձայնութեամբ վճռելու դաշնադրութիւնը։ „Ի հարկէ—ասում է Բիէրնսօն—ամենքը միաձայն կը պատասխանեն. „մեծ պետութիւնները։ Ի՞նչ նշանակութիւն կարող է ունենալ փոքր պետութիւնների աշխատութիւնը խաղաղութեան օգտի համար։ Միայն մեծ պետութիւնները—համոզված ասում են շատերը—տալիս են մեծ մարդիկ և մեծ նախաձեռնողներ։ Միայն մեծ պետութիւնները իսկական ոյժի տէր են“։

Բիէրնսօն աշխատում է ապացուցանել, թէ այդ հայեացքը սխալ է։ Նա ասում է, թէ չը պէտք է մոռանալ, որ մտքի, քաղաքականութեան, գրականութեան, պատերազմի և գեղարուեստի շրջանում յայտնի մեծ անունները, այն էլ այնպիսի անուններ, որոնք հիմնադիր են հանդիսացել՝ պատկանում են փոքր պետութիւններին, կամ այնպիսի պետութիւններին, որոնք այն ժամանակ փոքր էին։ Չը պէտք է մոռանալ նոյնպէս, որ մարդկային ոգու ամենամեծ շարժումներին զարկ տուողը նրանք են եղել։

Այդ իրողութիւնից հռչակաւոր գրողը եզրակացնում է, որ նոր նախաձեռնութիւնը չը պէտք է մեծ պետութիւնների մեծաշնորհը համարվի։ „Այդ աշխատութիւնը կարող են սկսել միայն նրանք, որոնց վտանգ է սպառնում։ Միայն սպառնալիքի ենթարկվածը կարող է փրկութեան ելք գտնել։“

Իսկապէս Բիէրնսօնի ճառը ուրիշ բան չէ, եթէ ոչ մի հրաւէր մանր ազգութիւններին դէպի ինքնաճանաչութիւն, մի կոչում՝ դէն գցել վախկոտութիւնը և չը վհատվել, միաբան աշխատել յօգուտ խաղաղութեան, իրանց յոյսը չը դնելով խոշոր պետութիւնների նախաձեռնութեան վրա։ Այդ հրաւէրը, շատ գիտնականների և քաղաքական գործիչների կարծիքով, ունի իր ապագան և գործնական նշանակութիւնը։ Մանր պետութիւնները, համա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆՈՐ ՏԱՐՎԱՅ ՄՏՔԵՐ

Ասում են թէ յունվարի մէկը հաչի օր է։ Յետ նայել, քննել, իրողութիւնները և գործերը համախմբել, գումարներ դնել, դատավճիռներ արձակել։ Մի այդպիսի հաչեւեսութեան՝ մարդկութիւնը կարօտութիւն ունի տասներկու ամիս ապրելուց յետոյ։ Կեանքը ալէկոծվում է ամեն օր. կատաղի է առօրեայ ժխորը, ամեն ինչ զբաղում է, պտտում է սրընթաց, գլխիվայր, առաջ բերելով տենդային մրցութիւն յանուն բարեկեցութեան, յանուն իրաւունքների և այն գաղափարների, որոնց երկրպագում են ամեն օր, ամեն ժամ։

Տասներկու ամիսը իսկապէս մի բաւական մեծ շրջան է այդպիսի կեանքի համար։ Եւ հաչեւեսութեան օրը պիտի լինէր լուրջ, ծանր զբաղմունքների մի օր։ Հեշտ չէ բերել, դասաւորել փաստերը, կանգնել նրանց առաջ, դատաւոր ընտրել նրանց և նրանցից լսել այս կամ այն վճիռը։ Ո՛րքան պատրաստութիւն է հարկաւոր, որքան եռանդ։ Եթէ հաչեւեսութիւնն էլ մի ձեւական գործ չէ, ինչպէս ձևական են դարձել մարդկային բոլոր հասկացողութիւնները, սկսած նոյն իսկ կրօնից՝ ապա ուրեմն նոր տարվայ օրը պիտի ներկայացնէր մի հրաշալի կերպարանք։ Մարդը պիտի պատրաստվէր, պիտի մաքրվէր, հեռու դնելով կեղծաւորութիւնը, ստախօսութիւնը, պատռելով այն դիմակը, որի տակ նա պահում է իր սիրտը, իր հոգին։ Նա պիտի հասկանար, որ տարվայ ընթացքում միայն մի օր է ինքը սահմանել, երբ նա պիտի վերջացնէ իր գործերը, սկսէ նոր շրջան, բայց ըսկսելուց առաջ պիտի քիչ կանգ առնէ, իր խղճի առաջ դատաստան բաց անէ իր գործերի վրա, հաչիւ տայ։

Բայց այսպէս է, ընթերցող։

Նայեցէք ձեր շուրջը, դիտեցէք բոլոր երեւոյթները։ Ձեր առաջ կանգնած կը լինեն ոչ միայն անհատներ, որոնք պէտք է հաչիւ տան, այլ անհատների ահագին համախմբումներ, ազգեր, որոնք այնքարէն են կառավարում, որոնք ժամանակակից քաղաքակրթութիւնն ու կուլտուրան են տանում իրանց ուսերի վրա։

Բաւական է վերցնել նոյն իսկ մի հատ խոշոր փաստ անցկացրած մի տարվայ կեանքից, և դուք կիմանաք, թէ ինչպէս են ազգերը իրանք իրանց դատում։ Դուք կը լսէք նրանց դատողութիւնները. բայց ճակատով, նոյն իսկ պարծենկոտութեամբ նրանք տիեզերական տարեգրութիւններին կը յանձնեն իրանց գործերը, տալով նրանց հրաշալի կերպարանք։ Ամեն ինչ դուրս կանչված կը լինի ինքնագովութեան համար։ Դուք զարմացած կը լսէք այնպիսի փաստաբանութիւններ, որոնք պիտի հասկացնեն, որ ամեն ինչ անվում է, գործադրվում է ոչ թէ գծուծ, ամօթալի չահասիրութեան նպատակով, այլ յանուն բարձրագոյն իդէալների, յանուն այնպիսի սրբութիւնների, որոնք յաւիտեան պիտի տիրեն տիեզերքի օրէնքների վրա։ Դա էլ, ի հարկէ, հաչիւ է... Մարդը հասել է այն աստիճանին, որ այնտեղ ուր կան միայն մանկութիւնը հաստատող թուանշաններ՝ նա կարող է այնպիսի դասաւորութիւններ անել, այնպէս յետ ու առաջ դնել, խառնել, չփոթել հասկացողութիւնները՝ որ նոյն թուանշանները մի զարմանալի բարեկարգութիւն կը պատկերացնեն։

Սպասվում է դատաստանը, հաչեւեսութիւնը։ Դուք գիտէք որ խիստ, անողոք պիտի լինի վճիռը. ձեզ համար պարզ է, որ կան շատ և շատ անարդ գործեր, որոնք խղճի առաջ ամբաստանութեան զարհուրելի հանգամանքներ պիտի բարդեն։ Բայց ինչ էք տեսնում։ Ամեն ինչ կատարեալ է, ամեն ինչ գեղեցկութիւն է. ոչինչ պակասութիւն, ոչ մի արատ, ոչ մի հանգամանք, որ կարմրացնէր դէմքը։ Ոչինչ չը կայ։ Եւ արդարացած մարդկութիւնը հպարտ և ինքնավստահ առաջ է գնում։ Նա միայն մի հատ հաչեւեսութեան օրի վրայով չէ քայլել. շատ և շատ այդպիսի օրեր կանցնեն, իսկ նա կը մնայ մի և նոյնը։ Կամենում էք իմանալ, թէ ինչպէս է ըստեղծվում այդ հեշտ, նախանձելի հանգամանքը։ Ես ձեզ կը հրաւիրեմ տեսնել մարդկանց նոր տարվայ օրը։

Ահա նա բացվել է։ Մարդկութիւնը որոնեցէք հայելիների առաջ։ Ամենքը զուգվում, զարդարվում են։ Ո՛րքան խնամք, որքան ուշադրութիւն։ Ամեն ինչ նախատեսված է։ Կոկ ու մաքուր դէմքեր, ձիւնափայլ ձեռնոցներ, նոր փողպատ, խնամքով լուացած, մաքրած կօշիկ։ Մարդու ամբողջ մարմնի վրա չը պիտի լինի մի հատ բիծ, մի հատ բան, որ տեսնողի աչքում պակասութիւն համարվէր, որ խանգարէր ներդաշնակութիւնը, մի և ամբողջ հասկացողութեան տպաւորութիւնը։ Դրստվում, սարքվում է ամեն մի թել, ամեն մի կոճակ, ամեն մի մաղ։ Եւ երբ վերջանում է ամբողջ արարողութիւնը, երբ այլ ևս չը կայ որ և է պակասութեան զգացմունք՝ մարդը դուրս է գնում։

Ամբողջ օրը նա վազվզում է։ Բաց է անում բազմաթիւ դռներ, հնչով սանդուխքներ է բարձրանում, սեղմում է ձեռքեր, ասում է, ծիծաղկոտ, ժպտուն բերանով շնորհաւորութիւններ է անում, նոր կեանք, նոր բախտ է մաղթում։ Բաւական չէ համարում եղածը, սահման և չափ չէ ուզում որ լինի. անթիւ բարիքներ, մարդու մտքին անհասանելի չափով երջանկութիւն, ուրախութիւն է ցանկանում ամենքին և ամեն մէկին։—Ինչքան լաւ է մարդը. ինչ սիրուն լեզու,

ձայնվելով իրար հետ, կարող են մեծ պետութիւնների հետ դաշնակցութիւններ կապել, որոշել իրանց փոխադարձ յարաբերութիւնները նրանց հետ և պայմանաւորվել, որ ծագող վէճերը վճռվեն փոխադարձ համաձայնութեամբ, մի միջազգային գերագոյն դատարանի ձեռքով։ Նոյն դատարանը կարող է դատել և լուծել փոքր պետութիւնների կամ ազգութիւնների միմեանց մէջ ծագած վէճերը։

Այսպիսով բիէլինսօնի և ուրիշ շատ նշանաւոր գործիչների կարծիքով՝ փոքր ազգութիւնները պէտք է ստանձնեն կուլտուրական դեր և աշխատեն իրագործելու՝ բոլոր մեծ և փոքր պետութիւնների մէջ ծագած վէճերը միջազգային գերագոյն դատարանի միջոցով վճռելու ծրագիրը։ Եթէ այդ ծրագիրը իրականանայ՝ այն ժամանակ նոյն իսկ մեծ պետութիւնները հնարաւորութիւն կունենան ծագած խնդիրներից միայն շատ սակաւ մասը պատերազմի միջոցով լուծելու։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

«ՄՇԱԿԻ» VADE MECUM

—

«Ով որ կամաց գնայ՝ ապահով կերպով կը գնայ, և ով որ ապահով կերպով գնայ,—հեռու կը գնայ», ասում է իտալական առածը (Chi va piano va sano; chi va sano va lontano)։ Այժմ, երբ «Մշակը» մօտենում է արդէն իր գոյութեան քառորդ դարի սեմին, նա կարող է համարձակ նկատել, որ ամբողջ 23 տարի անվկանդ դիմադրելով ամեն արգելքի, նա՝ իր հիմնարկութեան օրից սկսած, կամաց կամաց, բայց առանց վարանման և միշտ անյողդողդ, առաջացել է իր մի անգամ ընտրած շաւղում, մինչև այժմ. և իր այս ընթացքում նա արդէն այնքան ընդարձակ և բարեբեր շրջանակի մէջ է պեղած իր բահ ու բրիչով, որ այսուհետև ապահով կերպով կը շարունակէ իր առջև բացված ուղին և կը գնայ այդպէս՝ երկար և հեռու,—մի կողմից ցանելով նորանոր հողերի վրա իր հիմնադրից ստանդ ստացած սերմերը և միւս կողմից հնձելով արդէն հասած աջող արդիւնքը։

«Մշակի» ընթերցողները, մանաւանդ նրանք, որոնք անչեղ հետևել են նրա աւելի քան քսանամեայ քայլերին՝ կարօտ չեն անշուշտ նոր բացատրութիւնների, թէ ինչպիսի «սերմեր» էին և են դրանք, իսկ «արդիւնքի» այն մասերը, որոնք ներկայումս հասած հնձվում են, որոշակի հանդիսացնում են արդէն հասարակութեան առջև արդիւնաւոր պատկերը թէ սերմի և թէ սերմնացանի։ Բայց ինձ համար առանձնապէս օրախալի է կանգ առնել յատկապէս այն մասի վրա, որ սկզբից ի վեր «Մշակի» դիտումների մէջ ոչ-անհայտ տեղ գրաւած, մանաւանդ թէ առանձնապէս անընդհատ չեչված է եղել այս էջերում։

Քանի հայ արդեօք համամիտ էր Դր. Արծրունուն այն ժամանակ, երբ սա առաջին անգամ իր գրոչակի վրա նկարեց, իր ծրագրի անբաժան մասը հրատարակեց՝ «հայ՝ առանց կրօնի խարութեան» սկզբունքը. և քանի հայ այսօր հեռու է մտածելուց, թէ այդ սկզբունքը պատուանդան ունի իրան՝ ողջմտութիւնն ու ճշմարտութիւնը և անընկճելի է այժմ, չնորհիւ իր առաջացրած իրական, գնահատելի արդասիքի։ Ո՞վ կարող է այժմ չը տեսնել, թէ որչափ մօտեցած են հայութեան ստուարագոյն զանգուածին՝ նրա այն մասերը, որոնք թէև իրանց խղճում յատուկենական իրերի վրա տարբեր հայեացք ունենալով, կամ այդպէս ժառանգած լինելով իրանց հայրերից և պապերից, ձուլված չեն պաշտօնապէս մի և նոյն կրօնական պետի հօտին և առանձին փարախ ունեն իրանց համար,—բայց այնպէս գիտակցաբար և համերաշխօրէն գործում են ընդհանուր, ազգային ասպարէզներում, թէ մասնաւոր շրջանակի մէջ և թէ հայութեան միացած։—Իրաւունք ունենք ուրեմն ենթադրելու, որ եթէ ոչ բոլորի, դէթ ազգի մեծամասնութեան մէջ վերջնականապէս համոզում է կայացած, թէ այլադաւան հայերը ևս նոյնքան իրաւամբ եղել են և են հայութեան, հայ ազգի անդամներ, որչափ լուսաւորականները, երբ ունեն նոյն նախնիքը, նոյն լեզուն, նոյն ծէսերն ու աւանդութիւնները և վերջապէս նոյն զգացմունքը... Այս կէտում քայլն աւելի մեծ է եղած կաթոլիկ և բողոքական հայերի կողմից, որոնք մեծ մասամբ չօշափելի պատրաստականութեամբ ընդառաջ եկած, ընդունած են առաջադիմական մամուլի կողմից իրանց ուղղված ազգային համերաշխութեան հրաւէրը։ Երջանիկ պիտի համարէինք մեզ, եթէ ոչ միայն այսօր, այլ այսուհետև ևս առաւել ամրապնդված տեսնէինք համընթաց գործակցութեան այն կապերը, որ արդէն ձգված են լուսաւորչական հայ հասարակութեան և նրա այլադաւան արիւնակիցների մէջ։ Գաղտնիք չէ անշուշտ, որ հանգամանքների բերմամբ, կաթոլիկ և բողոքական հայ հասարակութիւնները ոչ թէ միայն ազգի ընդհանրութեան համար quantité negligeable չեն, այլ, ընդհակառակն, որոշ քարոյական և մտաւոր ոյժ են ներկայացնում, որից, մանաւանդ վերջին տասնամեակում, ընդհանրութիւնը դժգոհ լինելու բոլորովին առիթ չունի, դուրս հանելով անշուշտ քանի մի տխուր բացառութիւններ, որոնք, դժբաղդաբար, ազգի ոչ մեծ մասի մէջ են պակաս, ոչ փոքրի։ Հարկաւոր է արդեօք ծանրանալ, որ իրերի ներկայ վիճակում, որքան կարևոր է, որ երկու կողմից ևս միանգամ ընդ միշտ արմատախիլ անվէին նախկին պաղութեան և անտարբերութեան (դեռ չենք ասում ատելութեան) ցաւալի որոմները և ընդհանուր ոյժով հաւասարապէս ձգտէին ազգային քարոյական և մտաւոր վերածնութեան։

Եւ քանի որ «Մշակի» այժմեան խմբագրութեան և աշխատակիցների համար vade mecum է եղած և կը լինի միշտ այն գրոչակը, որ պարզած և միշտ բարձր էր պահած նրա անվեհեր հիմնադիրը՝ մենք տարակոյս չունենք, որ նաև իր այս 24-րդ տարեշրջանում, ինչպէս և բոլոր յետագայ շրջաններում, «Մշակը» կը շարունակէ անսկսն յարատևել մի և նոյն ուղղութեան մէջ, որին և ի սրտէ մաղթում ենք լիակատար աջողութիւն։

Ա. Սարուխանեան

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ 1895 ԹՎԻՆ

—

Անցաւ այն տարին, որին Ռուսաստանը, շատ յայտնի պատճառներով, դիմաւորեց պայծառ և մեծ յոյսերով։ Նոր տարու հետ միասին սկսվել էր նոր թագաւորութիւն, ուրեմն նոր գործունէութիւն, նոր կեանք։

Մի թռուցիկ ակնարկ ձգել այդպիսի մի տարեշրջանի ընդհանուր գործունէութեան վրա, բաւական մեծ հետաքրքրութիւն կարող է ունենալ։

1895 թվի ընթացքում Ռուսաստանի ներքին կեանքի մէջ բազմաթիւ փոփոխութիւններ տեղի ունեցան, որոնց վերջնական նշանակութիւնը որոշելը թէև ապագայի գործ է, բայց տարակոյս չը կայ, որ նրանք մեծ ազդեցութիւն պէտք է ունենան երկրի մտաւոր և քարոյական զարգացման գործի վրա։

Դիմենք ամենից առաջ պետական գործունէութեան տեսութեան 1895 թվի ընթացքում։ Չէ կարելի հերքել, որ այդ գործունէութիւնը, թէև նշանաւոր չէ եղել խոշոր օրէնսդրական ակտերով, բայց ունեցել է այնպիսի բնորոշ գծեր, որոնք արժանի են խորին ուշադրութեան, և ընթացել է ոչ այնքան թոյլ, ինչպէս նախընթաց տարին, թէև ուղղութեան կողմից մեծ զանազանութիւն չէ եղել։

Եւ ճշմարիտ, այնպիսի արմատական փոփոխութիւններ, որոնք զգալի կերպով չօշափէին հասարակական կամ այլ շահերը՝ տեղի չեն ունեցել. բայց, ինչպէս նկատում է «Недѣля» շաբաթաթերթը, «արտայայտվել է կարեկցութիւն դէպի հասարակական և ժողովրդական այնպիսի կարիքները, որոնց մասին կարծես թէ մոռացել էին»։

Ամենից առաջ նշանաւոր էր այն կարեկցութիւնը և հոգատարութիւնը, որ դահի բարձրութիւնից արտայայտվեց պէպի գրականութիւնը, ժողովրդական լուսաւորութիւնը և գիւղական տնտեսութեան գործը։ Դեռ յունվարի 13-ին կայացաւ Բարձրագոյն հրաման՝ իւրաքանչիւր տարի գանձարանից յիսուն հազար բուբլի յատկացնել օժանդակելու «գիտնականներին, գրողներին, հրապարակախօսներին և նրանց այրիներին ու որբերին»։ Այս իրողութիւնը, մանաւանդ, պրինցիպիական մեծ նշանակութիւն ունի, մի անգամ որ գահի բարձրութիւնից գիտնականների, գրողների և մամուլի մշակների գործունէութիւնը ուշադրութեան արժանի է հրատարակվում, մեծ յոյս կայ, որ այդ գործունէութեան իրաւագիտական և քարոյական կողմն ևս ուշադրութեան կառնվի։ Ի հարկէ, շատ կարևոր է ինտելիգենտ աշխատութեան նիւթական ապահովութիւնը, բայց աւելի կարևոր է և նրա քարոյական ապահովութիւնը—այն բնական ազատութիւնը, որի ժամանակ միայն հնարաւոր է տաղանդների բնական զարգացումը և բարգաւաճումը։

Ամբողջ տարվայ ընթացքում զանազան զեկուցումների առիթով կրկնվող Բարձրագոյն նպատակութիւնները ժողովրդական լուսաւորութեան գործը առաջ տանելու անհրաժեշտութեան մասին՝ պարզ ապացուցանում էին, որ այդ գործի զարգացումը պէտք է կառավարութեան գլխաւոր նպատակներից մինը լինի, և այդ նպատակի իրագործման պէտք է ձգտեն թէ կառավարչական օրգանները, և թէ հասարակական գործունէութիւնը։

Դէպի կրթութիւնը և լուսաւորութիւնը ունեցած հոգատարութիւնը արտայայտվեց և նրանով, որ 1895 թվի ընթացքում վճռվեց մի հարց, որի լուծման վաղուց սպասում էր ամբողջ Ռուսաստանը։ Մինչև 1895 թիւը գրեթէ ժամանակում էր երկրի աղքատկութեան մի ամբողջ կէսի, իգական սեռի բարձրագոյն կրթութիւն ստանալու անհրաժեշտութիւնը և իրաւունքը. բայց այդ անհրաժեշտութիւնը, եթէ ոչ ամբողջովին, դէթ նշանաւոր կերպով, ճանաչվեց իգական բժշկական ինստիտուտի բացումով, և այդ որոշումը հզօր զարկ տուեց իգական կրթութեան գործին, և համալսարանական քաղաքները սկսեցին աշխատել իգական բարձրագոյն կուրսեր բանալու։ Այդպիսով Ռուսաստանում այժմ կնոջ առաջ բաց է բարձրագոյն կրթութեան ճանապարհը։

Եթէ յիշենք և բեմական գործիչներին ցոյց տուած Բարձրագոյն ուշադրութիւնը, ինչպէս և գեղարուեստների ազգային մուզէի հիմնարկութիւնը՝ կը տեսնենք, որ բոլոր այդ իրողութիւնների մէջ արտայայտվում է մի որոշ հայեացք և ուղղութիւն—համակրութիւն՝ ռուս ժողովրդի մտաւոր և հոգեւոր կեանքի զարգացման։

Մի ուրիշ նշանաւոր դէպք ևս, որ տեղի ունեցաւ 1895 թվի ընթացքում այն է, որ հասարակ, բանուորական դասակարգի թշուառ վիճակը նկատողութեան առնվեց և միջոցներ մտածվեցին նրա ցաւերը թեթևացնելու և ամոքելու մասին։ Երիտասարդ Կայսրուհու հովանաւորութեան ներքոյ հաստատվեցին և հետզհետէ պէտք է բացվեն լայնատարած Ռուսաստանի բոլոր հեռաւոր կողմերում աշխատասիրութեան տներ, որտեղ անգործ մնացած բանուորները, ջրաւորները, մշակները կարող են իրանց համար գործ և աշխատանք գտնել։ Ի հարկէ, այդ աշխատասիրութեան տները չեն կարող արմատականապէս լուծել ժողովրդական թշուառութեան օգնելու հոգին. տեղ կայ՝ նա կը ձեռնայ բարոյականութեան վարդապետ, մի մարդ, որ պատրաստ է խաչվել մաքուր հակացողութիւնների անունով։—Իբրև ճարպիկ խաբեբայ՝ նա մթնացնում է մարդկանց մտքերը, խմացնում է թոյն, արատ և անբարոյականութիւն է տարածում։ Նա էլ, նա էլ, մարդկութեան թշնամին՝ մարդկութեան նոր բախտ է աւետում...

Ցեսանք փողոցներում քարշ ընկնող լպիրշ մարմինը. տեսանք ինչպէս է նա չոքէչոք սողում դրնատակերին, ինչպէս է քծնում, գալարվում, սրան ու նրան խոնարհ ողջոյններ տալիս, ժպտում, ծիծաղում, ողբում, գլուխ ու կուրծք ծեծում։ Նա ամբողջովին ձայների մի տոպրակ է. թընդում է, թրխկում է, գոռում է, աղաչում։ Միակ ցանկութիւնն է որ իր վրա ուշադրութիւն դարձնեն. երբէք ուրիշ մտքի տէր չէ եղել։ Եւ անում է նա, տանջվում է, քրտնքաբեր է ընկնում։ Կը հասնի նա երբ և իցէ իր բաղձանքին։—Չը գիտեմ։ Բայց ձեզ յայտնի է, որ մտավաճառը, մտքի պոռնիկը երբէք դրանից լաւ օր չէ տեսել։

Բայց ես յոգնեցայ, ընթերցող։ Կախարդական հայելին, տեսէք, շատ ուրիշ պատկերներ էլ է ցոյց տալիս։

Իսկ ինձ թոյլ տուէք երկու խօսքով ամփոփել նոր տարվայ մտքերս.—

Զգայնութիւն, ձեռնարկութիւն...

Լէո

հրաշալի սիրտ ունի։ Օրը գեղեցիկ, արեգակը փայլում է, աշխարհը տօնական կերպարանք մտած՝ նոր մեծ բախտ է խնդրում երկնքից։

Այսպէս է արտաքինը, կեղևը,—նա որը ձեռակերպվում է հայելիների առաջ։ Մարդը գնալով աւելի պիտի վարժվի այդ ձեռակերպութեան մէջ։ Հայելին արտաքինը դրատելու, ցոկելու համար դեռ շատ և շատ բաներ պիտի սովորացնէ։ Որովհետև նա է միայն ճանաչված։ Կայ, ասում են, և մի ուրիշ տեսակ հայելի, որ արտաքինի հետ գործ չունի։ Բայց ո՞ւր է նա։ Կորած, ժանգոտած, աղբանոցները գցած։

Թողէք որ նա մի քանի բօպէ սրբվի, չողայ... Եւ նայեցէք նրա մէջ։

Անցնում է ահա բուրժուան։ Մի կարծր սիրտ կախված է նրա մէջ։ Նա գիտէ որ ինքը աշխարհի զարդն է։ Երբէք իրան հասարակ մահկանացու չէ համարել։ Առանց խորհրդի չէ ճակատագիրը տուել նրան այնքան հարստութիւն, ապրելու, աշխարհի հաճոյքներ անելու անսպառ կարողութիւն։ Նա բարձր է, որովհետև իրան ծառայողներին ոռճիկ է տալիս. նա պաշտամունք է, որովհետև խեղճերը նրան տեսնելով պիտի հասկանան, որ հառաչանքների հայրենիք չէ մեր աշխարհը։ Խմացել է նա երկու երեք խօսք ասել, քաջութիւն է ունեցել չուրանալու՝ որ կան վշտեր ու ցաւեր մարդկութեան մէջ, որ ժողովուրդը կարիքներ ունի։ Այդ բոլորը նրա պարծանքն է, նրա փառքը։ Սիրում է նա որ ամեն գլուխ խոնարհվի նրա առաջ, որ ամեն երկրպագութիւն նրա անունով կատարվի։ Փառաւորեցէք նրան, և նա փոխարէնը կամ մի կտոր հաց կը տայ, կամ մի համակրական խօսքի կարժանացնէ։ Գոհ է նա, որ մարդկանց մի անգամ բազմութիւն ճանաչում է նրա դռները։ Գալիս են, խմբվում են այդտեղ. խնդիրք, աղաչանք. հասկանում է նա, որ արիւն է կաթում դրանց սրտից։ Նա չի մերժի, չի վռնդի իր դռներին ապաստանածներին։ Խոստումները պատրաստ են, նա չտայլում է նրանց, անթիւ անգամ բերել է տալիս խնդրատուներին իր դռների մօտ։ Փառաւորվում են և դռները, փառաւորվում է և մարմարեայ սանդուղքը, որին ակնածութեամբ նայում են խեղճերը։ Եւ վերջը... խաբէութիւն։ Ո՛չ, նա չէ խաբում. այլ իրաւունք ունի ամեն րօպէ ասել. «Քանի մէկին տամ... եթէ չը մերժեմ՝ ինքս էլ նրանց նման կը լինեմ, կարօտ, խեղճ»։—Գիտէ նրա մէջ կախ ընկած կարծր սիրտը, որ ոչ ոքին ոչինչ չէ տուել։ Բայց զբաղում են դարձեալ, խնդրում են օգնել...

Եւ նա դուրս է եկել՝ աշխարհին նոր օր, նոր բախտ մաղթելու։

Ո՞ւր է չտապում այս հասարակական ցեղը։—Արատների մի հիւսուածք է դա։ Կերել է, կլանել է առանց աչ ու ձախ նայելու։ Նրա կողոպտած մարդիկ տկլոր ու անտուն թափառում են փողոցներում։ Զարգացումը նա կարողացել էր նաւիբագործել իր ստանայական կարողութիւններով. և խուսափելով հասարակական դատաստանից՝ մնաց հասարակութեան մէջ, նոյն իսկ յարգված, պատիւների տիրացած։ Եւ այժմ նա է աշխարհի համար նոր երջանկութիւն ցանկացողը։

Գնում է կաշառակեր պաշտօնեան, մարդկանց արտասուքների գնով ապահովութիւն ձեռք բերած վամպիրը։ Նրան հետևում է հաղար ստերով, բիւրաւոր երդումներով մարդ խաբած, կեղծ մանկութիւնների միջոցով հարստացած վաճառականը։

Ահա և վաչխառուն։ Նա կեղեքել է, մորթել է, ողջ ողջ սպանել է։ Եւ ասում է. «նոր տարի, նոր, անսահման բախտ եմ ցանկանում»։

Դուրս եկաւ և հասարակական մոլորութիւնների չար հոգին։ Նա ամենավտանգաւոր չարագործն է։ Ծածկած մաքրութեան, ասատուածավախութեան դիմակը՝ նա մուտք ունի ամեն տեղ, ամեն անկիւն։ Անբարոյականութեան ճահիճներից նա դուրս է սողում անկասելի և մտնում է հասարակաց սրբավայրերը։ Այդտեղ նա սրբանում է, այդտեղ գիտէ աչքակապութիւն անել և իր թշուառ գոյութեան պահպանութիւնը գտնում է խաբված հասարակութեան մոլորութիւնների մէջ։ Ոչ խիղճ ունի, ոչ ամօթ։—Ցեղ կայ՝ նա պատրաստ է մի սև փողով ծախել իր միտքը, իր

Եւ քանի որ «Մշակի» այժմեան խմբագրութեան և աշխատակիցների համար vade mecum է եղած և կը լինի միշտ այն գրոչակը, որ պարզած և միշտ բարձր էր պահած նրա անվեհեր հիմնադիրը՝ մենք տարակոյս չունենք, որ նաև իր այս 24-րդ տարեշրջանում, ինչպէս և բոլոր յետագայ շրջաններում, «Մշակը» կը շարունակէ անսկսն յարատևել մի և նոյն ուղղութեան մէջ, որին և ի սրտէ մաղթում ենք լիակատար աջողութիւն։

Ա. Սարուխանեան

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ 1895 ԹՎԻՆ

—

Անցաւ այն տարին, որին Ռուսաստանը, շատ յայտնի պատճառներով, դիմաւորեց պայծառ և մեծ յոյսերով։ Նոր տարու հետ միասին սկսվել էր նոր թագաւորութիւն, ուրեմն նոր գործունէութիւն, նոր կեանք։

Մի թռուցիկ ակնարկ ձգել այդպիսի մի տարեշրջանի ընդհանուր գործունէութեան վրա, բաւական մեծ հետաքրքրութիւն կարող է ունենալ։

1895 թվի ընթացքում Ռուսաստանի ներքին կեանքի մէջ բազմաթիւ փոփոխութիւններ տեղի ունեցան, որոնց վերջնական նշանակութիւնը որոշելը թէև ապագայի գործ է, բայց տարակոյս չը կայ, որ նրանք մեծ ազդեցութիւն պէտք է ունենան երկրի մտաւոր և քարոյական զարգացման գործի վրա։

Դիմենք ամենից առաջ պետական գործունէութեան տեսութեան 1895 թվի ընթացքում։ Չէ կարելի հերքել, որ այդ գործունէութիւնը, թէև նշանաւոր չէ եղել խոշոր օրէնսդրական ակտերով, բայց ունեցել է այնպիսի բնորոշ գծեր, որոնք արժանի են խորին ուշադրութեան, և ընթացել է ոչ այնքան թոյլ, ինչպէս նախընթաց տարին, թէև ուղղութեան կողմից մեծ զանազանութիւն չէ եղել։

Եւ ճշմարիտ, այնպիսի արմատական փոփոխութիւններ, որոնք զգալի կերպով չօշափէին հասարակական կամ այլ շահերը՝ տեղի չեն ունեցել. բայց, ինչպէս նկատում է «Недѣля» շաբաթաթերթը, «արտայայտվել է կարեկցութիւն դէպի հասարակական և ժողովրդական այնպիսի կարիքները, որոնց մասին կարծես թէ մոռացել էին»։

Ամենից առաջ նշանաւոր էր այն կարեկցութիւնը և հոգատարութիւնը, որ գահի բարձրութիւնից արտայայտվեց պէպի գրականութիւնը, ժողովրդական լուսաւորութիւնը և գիւղական տնտեսութեան գործը։ Դեռ յունվարի 13-ին կայացաւ Բարձրագոյն հրաման՝ իւրաքանչիւր տարի գանձարանից յիսուն հազար բուբլի յատկացնել օժանդակելու «գիտնականներին, գրողներին, հրապարակախօսներին և նրանց այրիներին ու որբերին»։ Այս իրողութիւնը, մանաւանդ, պրինցիպիական մեծ նշանակութիւն ունի, մի անգամ որ գահի բարձրութիւնից գիտնականների, գրողների և մամուլի մշակների գործունէութիւնը ուշադրութեան արժանի է հրատարակվում, մեծ յոյս կայ, որ այդ գործունէութեան իրաւագիտական և քարոյական կողմն ևս ուշադրութեան կառնվի։ Ի հարկէ, շատ կարևոր է ինտելիգենտ աշխատութեան նիւթական ապահովութիւնը, բայց աւելի կարևոր է և նրա քարոյական ապահովութիւնը—այն բնական ազատութիւնը, որի ժամանակ միայն հնարաւոր է տաղանդների բնական զարգացումը և բարգաւաճումը։

Ամբողջ տարվայ ընթացքում զանազան զեկուցումների առիթով կրկնվող Բարձրագոյն նպատակութիւնները ժողովրդական լուսաւորութեան գործը առաջ տանելու անհրաժեշտութեան մասին՝ պարզ ապացուցանում էին, որ այդ գործի զարգացումը պէտք է կառավարութեան գլխաւոր նպատակներից մինը լինի, և այդ նպատակի իրագործման պէտք է ձգտեն թէ կառավարչական օրգանները, և թէ հասարակական գործունէութիւնը։

Դէպի կրթութիւնը և լուսաւորութիւնը ունեցած հոգատարութիւնը արտայայտվեց և նրանով, որ 1895 թվի ընթացքում վճռվեց մի հարց, որի լուծման վաղուց սպասում էր ամբողջ Ռուսաստանը։ Մինչև 1895 թիւը գրեթէ ժամանակում էր երկրի աղքատկութեան մի ամբողջ կէսի, իգական սեռի բարձրագոյն կրթութիւն ստանալու անհրաժեշտութիւնը և իրաւունքը. բայց այդ անհրաժեշտութիւնը, եթէ ոչ ամբողջովին, դէթ նշանաւոր կերպով, ճանաչվեց իգական բժշկական ինստիտուտի բացումով, և այդ որոշումը հզօր զարկ տուեց իգական կրթութեան գործին, և համալսարանական քաղաքները սկսեցին աշխատել իգական բարձրագոյն կուրսեր բանալու։ Այդպիսով Ռուսաստանում այժմ կնոջ առաջ բաց է բարձրագոյն կրթութեան ճանապարհը։

Եթէ յիշենք և բեմական գործիչներին ցոյց տուած Բարձրագոյն ուշադրութիւնը, ինչպէս և գեղարուեստների ազգային մուզէի հիմնարկութիւնը՝ կը տեսնենք, որ բոլոր այդ իրողութիւնների մէջ արտայայտվում է մի որոշ հայեացք և ուղղութիւն—համակրութիւն՝ ռուս ժողովրդի մտաւոր և հոգեւոր կեանքի զարգացման։

Մի ուրիշ նշանաւոր դէպք ևս, որ տեղի ունեցաւ 1895 թվի ընթացքում այն է, որ հասարակ, բանուորական դասակարգի թշուառ վիճակը նկատողութեան առնվեց և միջոցներ մտածվեցին նրա ցաւերը թեթևացնելու և ամոքելու մասին։ Երիտասարդ Կայսրուհու հովանաւորութեան ներքոյ հաստատվեցին և հետզհետէ պէտք է բացվեն լայնատարած Ռուսաստանի բոլոր հեռաւոր կողմերում աշխատասիրութեան տներ, որտեղ անգործ մնացած բանուորները, ջրաւորները, մշակները կարող են իրանց համար գործ և աշխատանք գտնել։ Ի հարկէ, այդ աշխատասիրութեան տները չեն կարող արմատականապէս լուծել ժողովրդական թշուառութեան օգնելու հոգին. տեղ կայ՝ նա կը ձեռնայ բարոյականութեան վարդապետ, մի մարդ, որ պատրաստ է խաչվել մաքուր հակացողութիւնների անունով։—Իբրև ճարպիկ խաբեբայ՝ նա մթնացնում է մարդկանց մտքերը, խմացնում է թոյն, արատ և անբարոյականութիւն է տարածում։ Նա էլ, նա էլ, մարդկութեան թշնամին՝ մարդկութեան նոր բախտ է աւետում...

Ցեսանք փողոցներում քարշ ընկնող լպիրշ մարմինը. տեսանք ինչպէս է նա չոքէչոք սողում դրնատակերին, ինչպէս է քծնում, գալարվում, սրան ու նրան խոնարհ ողջոյններ տալիս, ժպտում, ծիծաղում, ողբում, գլուխ ու կուրծք ծեծում։ Նա ամբողջովին ձայների մի տոպրակ է. թընդում է, թրխկում է, գոռում է, աղաչում։ Միակ ցանկութիւնն է որ իր վրա ուշադրութիւն դարձնեն. երբէք ուրիշ մտքի տէր չէ եղել։ Եւ անում է նա, տանջվում է, քրտնքաբեր է ընկնում։ Կը հասնի նա երբ և իցէ իր բաղձանքին։—Չը գիտեմ։ Բայց ձեզ յայտնի է, որ մտավաճառը, մտքի պոռնիկը երբէք դրանից լաւ օր չէ տեսել։

Բայց ես յոգնեցայ, ընթերցող։ Կախարդական հայելին, տեսէք, շատ ուրիշ պատկերներ էլ է ցոյց տալիս։

Իսկ ինձ թոյլ տուէք երկու խօսքով ամփոփել նոր տարվայ մտքերս.—

Զգայնութիւն, ձեռնարկութիւն...

Լէո

հարցը, բայց նրանք այնու ամենայնիւ մեծ սիրվանք կարող են մատուցանել բանաւորական և տպքատ դասակարգին:

Գիւղատնտեսութեան ասպարիզում նոյնպէս նշանաւոր է եղել կառավարութեան գործունէութիւնը 1895 թւի ընթացքում: Տարվայ սկզբում, յունվարի 7-ին Պետերբուրգում կայացած գիւղատնտեսական խորհուրդը, երկրագործութեան մինիստրի նախագահութեամբ, և տարվայ վերջում, դեկտեմբերի 10-ին, Մոսկվայում բացված համառուսական գիւղատնտեսական ժողովը, այնպիսի կարևոր գիւղատնտեսական և առհասարակ տնտեսական հարցեր արծարծեցին ու մըշակեցին, որոնք, եթէ իրագործվեն հետզհետէ, ինչպէս յոյս կայ՝ մեծ զարկ կը տան երկրի գիւղատնտեսութեան: Ուշադրութեան արժանի են մինիստրի՝ գիւղատնտեսական խորհրդում արտասանած խօսքերը, թէ «գիւղական տնտեսութիւնը բնաւ դասակարգային գործ չէ, քաղաքականութեան այս կամ այն ուղղութեան առարկայ չէ, այլ համազգային մի գործ է և մեր ազգային հարստութեան հիմքը»:

Գիւղատնտեսական այդ ժողովներում ամենաանհերքելի կերպով ապացուցվեց, թէ Ռուսաստանի գիւղատնտեսական քայքայման արմատական պատճառներից մինը—ժողովրդի խորին տգիտութիւնն է, նրա անգրագիտութիւնը, որոնք որչափ գոյութիւն ունեն՝ անհնարին է մտցնել ամբոխի մէջ կանոնաւոր երկրագործութեան նոյն իսկ տարրական սկզբունքները:

Բացի վերևում յիշված ակտերից՝ տեղի են ունեցել և կառավարչական մի քանի այլ տնօրէնութիւններ, որոնց նպատակն եղել է—ամրապնդել օրինապահութիւնը, կարգապահութիւնը, և զանազան վարչական շրջաններում գործադրվող անձնական լայն կամայականութիւնների ու ձեականութիւնների առաջն առնել: Այդ տեսակիցն են օրինակ, տարվայ վերջում հրատարակված օրէնքը՝ առանձին անհատների վարչական աքսորի մասին. բանտային կառավարութիւնը ներքին գործերի մինիստրի իրաւասութիւնից հանելու և արդարադատութեան մինիստրութեան յանձնելու կարգադրութիւնը. ներքին գործերի մինիստրութեան բարձր վարչութիւնը իրաւագէտներից կազմելու տնօրինութիւնը. գիւղացիներում աւելորդ դրդռութիւնը և ձեականութիւնները կարճացնելու մասին տուած հրահանգը և այլն:

Զը մոռանանք յիշել և միօրեայ ժողովրդադրութեան մասին հրատարակված օրէնքը, որը վերջապէս ճիշդ տեղեկութիւններ կը տայ մեզ Ռուսաստանի ազգաբնակութեան թւի մասին:

Ահա սրանք են կառավարչական միամեայ գործունէութեան գլխաւոր կէտերը, որոնք ցոյց են տալիս, թէ ջանքեր են լինում կեանքը իր կանոնաւոր վիճակի մէջ մտցնելու, հասարակական կեանքի զարգացումը հեշտացնելու և մտաւոր շահերը ապահովելու համար:

Ռուսաստանի հասարակական գործունէութեան և միջազգային յարաբերութիւնների վիճակի մասին մենք կը խօսենք յաջորդ յօդուածում:

Հ. Ա.

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԱՇԽՈՒՐՀԻՑ

1896 թւականի տարեշրջանը որ և է փոփոխութիւն չը մտցրեց Ռուսաստանում ներկայումս գոյութիւն ունեցող դատական կարգերի մէջ. մինիստր Մուրավեովի ձեռներէցութեամբ սկսած դատական ըէֆորմների կարևոր գործը տակաւին չէ մօտեցել իր վախճանին, և դժուար է հաստատ և որոշ գաղափար կազմել լինելիք փոփոխութիւնների վերջնական պատկերի մասին: Կան միայն ենթադրութիւններ, որոնք սակայն հեռու են իրականութիւնից և ծագում են բարձր շրջանների բռնած այս կամ այն ընթացքից:

Մուրավեովի տուած ուրուագիծը դատական մասի վերաբերութեամբ, չօշափում է շատ կարևոր հարցեր: Այն եռանդը և բուռն գործունէութիւնը, որն արտայայտում է մինիստրութիւնը վերջին տարիները՝ թերևս փութացնէ ըէֆորմների իրականացումը, բայց այս էլ պէտք է նըկատել, որ նշանակված ժամանակամիջոցը շատ սուղ է այդ մեծ գործը աջողութեամբ և ամենայն լրջութեամբ վերջացնելու համար: Այժմ իրաւագիտական մամուլը ջերմ եռանդով մշակում է այն բազմաբովանդակ նիւթը, որի բովքից պիտի անցնէ ձեռնարկած գործի մարմնացումը. մի շարք հետազօտութիւններով և մասնագիտական թերթերում ցրված բազմաթիւ նկատողութիւններով չօշափվում են տեսակ տեսակ պակասութիւններ և թերութիւններ, որոնք ներկայ օրէնսդրութեան ցաւոտ տեղերն են կազմում:

Երբեմն դիտողութիւններ են լինում և մեր երկրի դատական կարգերի մասին: Այս տարի մինիստրի Կովկաս այցելելը և սենատոր Կոնիի ղեկավարութեամբ տեղի ունեցած ըէվիզիան անշուշտ իր հետևանքները կունենայ մօտ ապագայում: Թէ ինչ ուղղութեան պէտք է հետեւէ նոր դատաստանը Ռուսաստանի հեռաւոր անկիւններում, ուր ազգաբնակութեան մեծամասնութիւնը կազմում են այլազգիներ՝ մինիստրը իր արտասանած մի ճառում ի միջի այլոց հետևեալ խորհրդաւոր կարծիքն է յայտնում, որից, ի հարկէ, չը պիտի խորշեն դատաստանի հետ առնչութիւն ունեցող և այլ հաստատութիւններ: Ջնջված արդարութեան և ողորմածութեան դաղափարով դատարանը հեռու պիտի լինի կրօնական և քաղաքական-կուսակցական ոգուց. ոչինչ այնքան չէ խաղաղացնում յուզված կրքերը և ձգտումները՝ որքան այն գիտակցութիւնը, թէ դատարանի համար չը կայ խտրութիւն կրօնի, լեզուի, ծագման, դասակարգի. նրա առաջ կան միայն անձեներ և մեղաւորներ, հարստահարվողներ և հարստահարողներ, անարդվածներ և անարդողներ:

Ի հարկէ, այդ նպատակին հասնելու համար բաւական չէ ունենալ մասնագիտական ուսում, այլ հարկաւոր է օժտված լինել մտաւոր և բարոյական բարեմասնութիւններով, ունենալ սէր դէպի ստանձնած գործը և ջերմ անձնուիրութիւն նրա սկզբունքներին, անսպասաս տակտ, անդորր ոգի և մեղմ վերաբերմունք: Սկսում են վերջին ժամանակ խօսել և այն կարևոր խնդրի մասին, որ հարկաւոր է արդարութեան չաները պաշտպանելու համար պաշտօնատար անձանց պատասխանատուութեան ենթարկելու եղանակը փոխել և վարչական պաշտօնեաների քննութեան կանչելու իրաւունքը անմիջապէս պրոկուրորի իրաւասութեան յանձնել, տալով իրաւունք այս կամ այն պաշտօնական զեղծումից վնասված կամ անարգված անձին անմիջապէս դիմել պրոկուրորին: Այդ բարեփոխութեան կարօտ են մանաւանդ այն հեռաւոր անկիւնները, ուր ըստ մեծի մասին վարչական զանցառութիւնները անհետևանք են մընում, իշխանութեան հակող աչքը չէ կարող ամեն տեղ թափանցել, իսկ գանգատաւորի արդարացի պահանջը, չնորհիւ ներկայումս գոյութիւն ունեցող օրէնսդրութեան, որով պատշաճաւոր իշխանութիւնից է կախված այս կամ այն ընթացքը տալ գանգատին՝ մնում է ըստ մեծի մասին անկատար: Ի հարկէ, այդ ըէֆորմների հետ սերտ կապ ունի և այն, թէ ինչ սահմաններով կընդունվի երդուեալ դատաւորների իրաւասութիւնը դատավարութեան մէջ. այդ խնդրին նուիրված են բազմաթիւ քննադատութիւններ մանաւանդ վերջին տարիները, երբ առանձին եռանդով արշաւանք սկսվեց որոշ ուղղութեան մամուլի կողմից այդ կենսարար և հարօրուտ հաստատութեան դէմ. նոյն խնդրով զբաղվեց և այն մասնաժողովը, որ նորերս Պետերբուրգում նիստեր ունեցաւ՝ մասնակցութեամբ դատաստանական պալատների ատաղ նախագահների և պրոկուրորների, և այդ մասնաժողովը իր անդամների գերակշռող մեծամասնութեամբ ճանաչեց այդ հաստատութեան անցեալում մատուցած ծառայութիւնը և ապագայում մատուցանելիք բարիքները արդարադատութեան գործին:

Ահա այդ և նոյնանման խնդիրներ այն օրից, երբ կեանքի կանչվեց Բարձրագոյն հաստատված յանձնաժողովը, յուզում են դատական աշխարհի հետ չփում ունեցող շրջանները և առատ նիւթ են տալիս թեր և դէմ ակնկալութիւնների: Արդ՝ 1896 թւականի տարեմուտին մաղթենք այդ ցանկութիւնների բարեյաջող լուծումը մօտ ապագայում և XX դարի չէմքի առաջ տեսնենք իրագործված լաւագոյն և ազնիւ մտքերի փայփայած իդէալները և ձգտումները:

Յ. Ս.

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՒ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

Մեր երկրի մտաւոր և բարոյական զարգացման գործը, առաջադիմութիւնը մեծապէս կախված լինելով կրթական հաստատութիւնների թըւից, նրանց վիճակից և այն պայմաններից, որոնց մէջ գործում են այդ հաստատութիւնները՝ անհրաժեշտ է մի ընդհանուր տեսութիւն անել Կովկասում և Անդրկովկասում գտնվող բոլոր դպրոցների մասին:

Այս տեսութիւնն անելու համար մեզ առատ նիւթ և պաշար է մատակարարում Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձու Եանովսկու այն հետաքրքիր, ընդարձակ և մանրամասն տեղեկագիրը, որ նա հրատարակել է այս օրերս շրջանի բոլոր պետական, հասարակական, եկեղեցական-ծխական և մասնաւոր, զանազան անուանակոչութեան դպրոցների 1894 թւի ընդհանուր վիճակի և գործունէութեան մասին:

Կովկասում և Անդրկովկասում գտնվող բոլոր կրթական հաստատութիւնները հետևեալ տեսակի և տիպի են. արական գիմնազիաներ և պրոգիմնազիաներ, ըէալական ուսումնարաններ, իգական գիմնազիաներ և պրոգիմնազիաներ, ուսուցչական ինստիտուտ, ուսուցչական սեմինարիաներ, քաղաքային դպրոցներ, լեռնցիների դըպրոցներ, արհեստագիտական ուսումնարաններ, ծովային դպրոցներ, Մարիինսկի իգական ուսումնարաններ, սկզբնական կամ տարրական (գիւղական) դպրոցներ, եկեղեցական-ծխական ուսումնարաններ և մասնաւոր դպրոցներ: Ուրեմն, ամբողջ Կովկասեան երկրում դեռ մի հատ բարձրագոյն կրթական հաստատութիւն չը կայ:

1895 թւի յունվարի 1-ին այդ բոլոր կրթական հաստատութիւնների թիւը հետևեալն էր.

I. Մի ջնակարգ ուսումնարաններ—41, որոնցից՝ արական գիմնազիաներ—9, պրոգիմնազիաներ—3, ըէալական դպրոցներ—8, իգական գիմնազիաներ—11, իգական պրոգիմնազիաներ—5, ուսուցչական ինստիտուտ—1, ուսուցչական սեմինարիաներ—4:

II. Սաորին ուսումնարաններ—55, որոնցից՝ քաղաքային դպրոցներ—37, լեռնցիների ուսումնարաններ—5, արհեստագիտական դպրոցներ—7, ծովային դպրոցներ—3, Մարիինսկի ուսումնարաններ—3:

III. Մասնաւոր ուսումնարաններ—94:

IV. Սկզբնական դպրոցներ—941:

Այդ բոլոր դպրոցները, թւով 1131, ենթարկվում են ուսումնարանական շրջանի հոգաբարձուի անմիջական իրաւասութեան:

Բացի այդ 1131 հաստատութիւններից կան և հետևեալները.

V. Հայոց եկեղեցական-ծխական ուսումնարաններ—233, որոնցից՝ երկդասարանեան—42, միդասարանեան 181:

VI. Ուրիշ մինիստրութիւններին և վարչութիւններին պատկանող դպրոցներ—762, որոնցից՝ միջնակարգ—17, սաորին—17 և սկզբնական—748:

VII. Մահմէտական մադրասաներ և հրէական դպրոցներ մէչիդներում և սինագոգներում—2160:

Ուրեմն բոլոր կրթական հաստատութիւնների թիւը Կովկասում և Անդրկովկասում 1895 թւի յունվարի 1-ին՝ 4286 է, կամ աւելի ճիշդն ասելով՝ բուն կրթական հաստատութիւնների թիւը պէտք է հաշվել 2126, որովհետև, ինչպէս իրաւացի կերպով նկատում է ինքն Եանովսկին, մահմէտական մադրասաները և հրէական ուսումնարանները, իբրև ոչ կանոնաւորապէս կազմակերպված, չեն կարող դպրոցներ համարվել:

Ընդունելով որ Կովկասի բնակիչների թիւը 8,156,376 է (այդ թիւն է ցոյց տուած 1895 թւի պաշտօնական Կովկասեան օրացոյցի մէջ), այն ժամանակ կը տեսնենք, որ ամեն 10,000 բնակչի վրա միջին թւով ընկնում է 6,76 դպրոց 253 աշակերտներով: Հիւսիսային Կովկասում—3,53, իսկ Անդրկովկասում—6,29 դպրոց: Իսկ եթէ դպրոցների ընդհանուր թւից դէն գցենք մահմէտական և հրէական ուսումնարանները, այն ժամանակ հիւսիսային Կովկասում ամեն 10,000 բնակչի վրա ընկնում է 3,52, իսկ Անդրկովկասում—2,03 դպրոց:

Ծախս: Ուսումնարանական շրջանին ենթարկված վերոյիշեալ բոլոր 1131 և Անդրկասկեան երկրում գտնված 14 կրթական հաստատութիւնների վրա ծախս եղել է ընդամենը 3,466,883 ր., որից՝ միջնակարգ դպրոցների վրա—1,728,396 ր., սաորին դպրոցների վրա—512,270 ր. և սկզբնական ու մասնաւոր դպրոցների վրա—1,226,217 ր.: Միջին թւով ամեն մի միջնակարգ ուսումնարանի վրա ծախսվել է—42,156 ր., սաորին դպրոցի վրա—9,314 ր., սկզբնական դպրոցի վրա—1,167 ռուբլի:

Հայոց եկեղեցական-ծխական բոլոր 233 ուսումնարանների վրա ծախս եղել է—229,177 ր., ուրեմն ամեն մի ուսումնարանի վրա միջին թւով—1284 ր.: Այդ թւի մէջ չեն մտնում թեմական դպրոցները:

Ուսուցիչների թիւը: Շրջանի դասատուների թիւը եղել է 5,459, որից 1,266—միջնակարգ, 600—սաորին և 3,130—սկզբնական դըպրոցներում, իսկ 56—շրջանի և դիրեկցիաների մէջ ծառայողներ:

Այդ դասատուներից արական սեռին պատկանում են 4,500 հոգի կամ 82,4%, իգական սեռին—959 կամ 17,6%: Ըստ դաւանութեան՝ յունադաւաններ—4,434 (81,1%), լուսաւորչականներ—425 (7,8%), կաթոլիկներ—182 (3,4%), բողոքականներ—193 (3,6%) մահմետականներ—202 (3,7%), հրէաներ—14 (0,3%): Այդ բոլոր 5,459 ծառայողներին ռոճիկ տրվել է 2,205,085 ռուբլի, որից բուն ռոճիկ—2,018,648 ր. և լրացուցիչ թոշակ Կովկասում ծառայելու համար—92,573 ռուբլի, իսկ կենսաթոշակ—93,864 ռուբլի:

Հայոց եկեղեցական-ծխական ուսումնարանների դասատուների թիւն եղել է—528, որից կրօնաւոր—71, ուսուցիչներ—325 և վարժուհիներ—132: Դրանցից ուսուցչական ցենզ ունեցել են 139 հոգի կամ 30,4%, այն է 93 ուսուցիչ և 46 վարժուհի:

Ուսումնառուների թիւը: 1895 թ. յունվարի 1-ին այդ թիւը եղել է շրջանի բոլոր ուսումնարաններում—91,692, որից աշակերտներ—70,337 կամ 76,8%, իսկ աշակերտուհիներ—21,355 կամ 23,2%: Այդ 91,692 աշակերտները դասաւորված են եղել հետևեալ կերպով. միջնակարգ դպրոցներում—12,850, սաորին դպրոցներում—9,479, մասնաւոր դպրոցներում—4,505 և սկզբնական դպրոցներում—64,858: Միջին թւով ամեն մի միջնակարգ դպրոցում—313 հոգի, ամեն մի սաորինում—172, մասնաւորում—48, սկզբնականում—68:

Ըստ ազգութեան և դաւանութեան այդ ուսումնառուները հետևեալ տոկոսն են ներկայացնում, 1) ռուս—53,9%, վրացի—19,9%, հայ—12,6%, թուրք—2,8%, լեռնցի—2,0%. հրէա—1,2% և ուրիշ ազգութիւններ—7,6%:

Հայոց եկեղեցական-ծխական 233 ուսումնարաններում սովորողների թիւը եղել է 16,066, որից տղայ—10,785 կամ 67,1%, իսկ աղջիկ—5,281 կամ 32,9%:

Ինչպէս երևում է՝ տոկոսային յարաբերութիւնը որոշելիս, Եանովսկու տեղեկագիրը ի նկատի չէ ունեցել այդ 16,066 թիւը, այլապէս անկարելի բան է, որ հայ սովորողների թիւը 12,6% լինի:

Այս ընդհանուր տեսութիւնից ընթերցողը կարող է մի թէև համառօտ, բայց ամփոփ գաղափար կազմել Կովկասի և Անդրկովկասի կրթական գործի վիճակի մասին: Ճիշդ է, մեր առաջ բերած թուանշանները, անցեալ տարիների հետ համեմատելով, ցոյց են տալիս, որ ուսումը արագ քայլեր է անում. բայց ընդհանրապէս առած՝ կրթական գործը մեր երկրում դեռ բաւական աննախանձելի վիճակի մէջ է գտնվում, մանաւանդ իգական սեռի կրթութիւնը, քանի որ մօտ 8½ միլիոն բնակիչների վրա ընդամենը 2,126 կրթական հաստատութիւններ ունենք, այն էլ դրանից միայն 41-ը միջնակարգ:

S.

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թաւրիզ, 19 դեկտեմբերի

Նուիրական պարտք կը զգամ հերքել այն սխալ լուրը, զոր առած էիք անգլիական լրագրէ՝ և հրատարակած ձեր բազմաչխատ «Մշակին» 142-րդ թւովը: Անծանօթ է ինձ պատճառն, թէ լրատուն ինչու համար այդպէս բոլորովին հակառակ գոյն տուած է խնդրոյն՝ բուն իրականէն: Լրատուի խօսքերն են այսպէս:

«Կ. Պոլսից հեռագրում են Լոնդոնի լրագիրներին նոյեմբերի 25-ից, թէ երեք բողոքական պատօրներ,—Թանզարեան՝ Իշնախ քաղաքից, Գրիգոր՝ Կոսից, և Աթլասեան իր կնոջ հետ՝ Հէսէնիկից, ընդունել են մահմէտականութիւն»

Այս լուրն բոլորովին անճիշտ է, անուններն ևս աղաւաղեալ: Իրողութիւնը հետևեալն է:

Նոյն չորս անձինք աւելի յօժարութեամբ ընտրեցին հաւատարիմ մնալ իրենց հաւատոյն և մեռնել, քան թէ մահմէդականութիւնն ընդունել և ապրել:

Աւելի կատարեալ տեղեկութիւն ստացանք առանձին նամակաւ, որ գրուած է իբր մխիթարական թղթակցիս, և Պ. Վ. Թամզարեանի, մեր նահատակված հարց կրուստին վերաբերմամբ: Նամակագիրն մեզ մխիթարական կարդալէ յետոյ կաւելացնէ հետեւեալն.

«Խիստ շատերն մարտիրոսացան, որոց չարքին մէջ են պատ. Գ. Թամզարեան՝ Իշմէի հովիւն, Պ. Կիւլէսէր (83 ամեայ ծեր) նոյն տեղէն, Պ. Գրիգոր՝ խցկոցի քարոզիչն, Խուլագեղի քարոզիչն՝ Ալիլասեան Պօղոս և նրա կինն»:

Բողոքականաց քարոզիչ՝

Նիկողայոս Կիւլէսէրեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» այսօրվայ համարը բաղկացած է թերթ ու կէսից:

Այսօր հրատարակում ենք «Մշակի» 24-րդ տարեշրջանի առաջին համարը: «Մշակի» երկրորդ համարը լոյս կը տեսնի հինգշաբթի, յունվարի 4-ին:

Կ. Պոլսից մեր թղթակիցը մեզ գրում է դեկտեմբերի 19-ից. «Այժմեան կացութեան մէջ յիշենք, թէ օրացոյցի խնդիր մըն ալ ունինք որ լուծուեցաւ օրացոյցին լուծումովը: Դուռը սրբագրութիւններ կընէ մեր տօնական բացատրութիւններուն մէջ. պատրիարքը յանձնառու չեղաւ, և օրացոյցը 1896-ի համար, որ նոր հրատարակուեցաւ՝ կը պարունակէ միայն օտարազգի տօներ, իսկ մեզի համար միայն օրերը կան. երբ է Զատիկ, երբ Վարդավառ կամ Խաչ, երբ այս ինչ տօնը՝ ոչինչ գիտենք: Ան ալ սուրբերուն ցոյցն է: Եւ կրնաք երևակայել, թէ Կրօնական ժողովը պատրիարքին հետ կուռեցաւ, թէ ինչու ինքնաբերաբար այս որոշումը ըրած է, առանց կրօնական ժողովի արտօնութեանը: Ուր պիտ տանի մեզ բծախնդրութիւնը: Կարող էք ասկէ հետևցնել որ Էջմիածին տպուած օրացոյցէն հատ մը ով որ Պոլիս իր մէկ բարեկամին ղրկէ՝ շատ «աստուածահաճոյ» գործ մը ըրած պիտի ըլլայ. վերջապէս անով կրնանք ուղղութիւն մը ունենալ Աստուծու հետ յարաբերութիւններու մէջ:»

Արդարադատութեան մինիստրը թոյլատրեց բանալ դատաստանական վարչութեան բարեգործական ընկերութեան բաժինը Թիֆլիսում: Ընկերութեան գործերը վարելու համար նշանակված են—դատաստանական պալատի աւագ նախագահը՝ նախագահ, պալատի պրօկուրօրը՝ փոխ-նախագահ, տեղական նահանգական դատարանների նախագահները և պրօկուրօրները և Թիֆլիսի հաշտարար դատաւորներից մինը՝ ընկերութեան վարչութեան անդամներ:

Ասխաբադից, Գէորգ Եղիազարեան, «Մշակի» 1896 թ-ի մի օրինակ նուիրել է Զանգեզուր գաւառի Արծուանիկ գիւղի հայոց դպրոցին:

Աստրախանից, Աւետիք Փանեանց, «Մշակի» 1896 թ. մի օրինակը նուիրել է Վերին-Ագուլիսի հայոց օրիորդաց դպրոցին:

Թիֆլիսի քաղաքային դուման, դեկտեմբերի 28-ի նիստում, քաղաքային լօմբարդի կառավարիչ ընտրեց Մ. Ղազարեանցին, և կանդիդատ իշխ. Ն. Թումանովին:

Ներքին գործերի մինիստրութեան կից կազմված յանձնաժողովը, որը զբաղված է գաղթականական շարժումը կարգադրելու գործով մեր պետութեան սահմանների վրա՝ մայրաքաղաքի լրագիրների խօսքով, քննում էր ռուս գիւղացիներին գաղթեցնելու հարցը Բագուի նահանգի Ղուբայի գաւառի, նոյնպէս և Անդրկասպեան շրջանի և Պարսկաստանի սահմանի վրա գտնվող մի քանի մահմեդական գիւղերում:

Ներկայ յունվարի 21-ին լրանում է կայսերական ռուսաց աշխարհագրական ընկերութեան յիսնամեակը: Զանազան հիմնարկութիւններ վճռել են ուղարկել ուղերձներ և շնորհաւորական հեռագիրներ:

Ամսիս 23-ին, Մոսկվայում, կարճատև հիւանդութիւնից յետոյ վախճանվեց Բաքուի Մարդասիրական ընկերութեան նախագահ Սամուէլ Բաղիրեան: Հանգուցեալն իր կեանքի ամենամեծ մասը անցկացրեց Բաքուում: Շնորհիւ իր նախաձեռնող ոգու, նա չէր վախենում առևտրական և արդիւնագործական խոշոր ձեռնարկութիւններից և շատ անգամ ունենում էր մեծ աջողութիւն: Բաքուի դումայում նա ձայնաւոր էր:

Գիւղատնտեսական ընկերութեան Քութայիսի բաժինը ներկայ 1896 թ-ին կը ստանայ 500 ր. նպաստ կենտրոնական ընկերութեան կողմից:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ դեկտեմբերի 28-ին Պետերբուրգի նահանգական դատարանում նշանակված էր Թիֆլիսի վաճառականի կին Մարիամ Սօբոլեվայի հետաքրքիր գործը, որը մեղադրվում է վաշխառութեան մէջ: Սօբոլեվան ծագումով վրացուհի է և վատ է խօսում ռուսերէն: Նա անցեալ ռուս-թիւրքաց պատերազմի ժամանակ պաշարեղէններ էր հայթայթում կովկասեան զօրքի համար և պատերազմի ժամանակ վիրաւորվեց:

Շերամապահ Ագրիկեանցը պատրաստել է Պաստէօրի մեթոդով շերամի սերմ և դիմել է Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան՝ նպաստելու նրա տարածման:

ՇՈՒՇՈՒՅ մեզ գրում են. «Կիրակի, ամսիս 24-ին, տեղիս կօնսիստօրիայի դահլիճում, Թեմիս կառավարիչ Սաթունեան վարդապետի նախագահութեամբ, կայացաւ թեմական դպրանոցի հոգաբարձուների ընտրութիւնը: Եկեղեցական 40 պատգամաւորներից ներկայ էին 34 հոգի: Գաղտնի քուէարկութեամբ ընտրվեցին հոգաբարձուներ—Նիկոլայ Երամիշեան, Պետրոս Զաքարեան, Մնացական Խունիեանց, Մովսէս Իւղբաշեանց, Բ. Աբրիբէգեանց և Թէոդորոս Խաչիեան: Իսկ անձնախոխանորդներ՝ Միրզա Լալազարեան, Մովսէս Շահնազարեանց, Գրիգոր Բէգլարեանց, Աղաջան Ժամհարեան, Իվան Քալանթարեան և Զաւադ Իշխանեանց: Նախկին հոգաբարձուներից միայն վերջինս չը հրաժարվեց քուէարկվելուց: Ընտրութիւնը աջող է:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիւրք էմիգրանտ Մուրադ-բէյին, որը այժմ ապրում է Լօնդօնում, Գլադստօն մի նամակ ուղարկեց, որի մէջ յայտնում է, որ եթէ ինքն յարձակվում էր սուլթանի կառավարութեան վրա՝ նա այդ անում էր ոչ թէ նրա համար, որ ինքն հակակրութիւն է զգում դէպի թիւրքերը: Ընդհակառակն, ինքն ճանաչելիս է եղել շատ թիւրքեր, դէպի որոնց ամենաանկեղծ համակրութիւն և յարգանք էր տածում: Եթէ ինքն այժմ աւելի համակրութիւն է ցոյց տալիս հայերին՝ այդ այն տանջանքների պատճառով է, որոնք ինքն անօրինակ է համարում:

Կ. Պոլսից «Новости» լրագրին գրում են. «Հայ-անգլիական տեղեկութիւններին համաձայն, Զէյթունում այժմ գտնվում են 20-ից մինչև 25 հազար ապստամբված հայ լեռնականներ, որոնք լաւ են զինուորված և բաւականաչափ պաշար և պատերազմական մթերքներ ունեն: Իսկ թիւրքաց զօրքը, Մուստաֆա Բէզմի-փաշայի հրամանատարութեամբ, բաղկացած է 15—16 բատալիօններից և մէկ լեռնային բատարէայից: Այս բոլորը ստիպում է ենթադրել, որ Զէյթունի շրջանում արիւնահեղ կռիւ տեղի կունենայ»:

«Новости» լրագրի տեղեկութիւնների համեմատ, Վաշինգտօնի կառավարութիւնը խոշոր վարձատրութիւն է պահանջում թիւրքիայից ամերիկացի այն միսիօներների համար, որոնք սպանվեցին հայկական խռովութիւնների ժամանակ:

Անգլիական «Times» լրագրում տպված է Արդայլեան դքսի նամակը, որի մէջ գտնում ենք հետեւեալ կտորը.

«Եթէ Անգլիան չէ կարող ձեռք բերել ուրիշ պետութիւնների նպաստը և օգնութիւնը հայոց հարցում, այն ժամանակ նա թող առաջարկի Ռուսաստանին՝ խաղաղութիւն հաստատել Հայաստանում, որը դժուար չի լինի նրա համար՝ շնորհիւ նրա աշխարհագրական դրութեան և պատերազմական այժի»:

Լօնդօնից «Нов. Время» լրագրին հեռագրում են. «Անգլիայի ազատամիտ մամուլը խորհուրդ է տալիս դիմադրական կուսակցութեան պարագլուխներին՝ արտաքին քաղաքականութեան իրանց պրօգրամի մէջ մտցնել Ռուսաստանի հետ համաձայնութիւնը այն պայմանով, որպէս զի Ռուսաստանի վրա դրվեն բոլոր հոգսերը արևելեան քրիստոնեաների մասին: Պահպանողական մի քանի լրագիրներ համաձայնում են կառավարութիւնը՝ միանալ այդ պրօգրամին: Նոյն ոգով և ուղղութեամբ խօսում են շատ անձինք սալօններում և կլուբներում:»

«Daily Cronicle» պատասխանում է լօրդ Բաղբէրիի նամակին՝ նկատելով, թէ նրա վրա նոյնպէս ընկնում է պատասխանատուութեան մի մասի հայոց հարցում: Լօրդ Սալսբիւրին առանձին գործունէութիւն չը ցոյց տուեց, դա ճիշդ է. բայց յամենայն դէպս նա չէր աշխատում պատասխանատուութիւնից փախչել և աջողեցրեց պետութիւնների համաձայնութիւնը. բայց չէ կարելի անհնարին բան պահանջել նրանից: Յամենայն դէպս, բոլոր պետութիւնները համաձայն են միմեանց մէջ մի բանում,—ասում է լրագիրը,—այն է՝ թէ անհրաժեշտ է դադարեցնել սպանութիւնները:

Կ. Պոլսից հեռագրում են Հավասի գործակալութեան.

«Հայաստանի բարձրագոյն կոմիսար Շաքիր-փաշան տեղեկացրել է կառավարութեան, թէ ռոճիկ չը ստանալու պատճառով, զինուորները մերժում են հնազանդվել, փախչում են ամբողջ խմբերով և դառնում են կատարեալ աւազակներ, որոնք կողոպտում են գիւղերը, քիւրդ հեծելազօր համիդիականների հետ միասին:

«Զէյթունի մասին դեռ որոշապէս ոչինչ յայտնի չէ. միայն Հալէպի զինուորական հրամանատարը հեռագրել է, որ իրան ուղարկեն փող, պաշար, պատերազմական մթերք և օգնութիւն՝ կանոնաւոր զօրքով, որովհետև քիւրդ հեծելազօրը, բաշիբուզուկները և չէրքէզները չեն հնազանդվում և չեն կամենում թողնել հովիտները, որտեղ նրանք կարող են պարապել աւարառութեամբ»:

Ռուսաց հեռագրական գործակալութիւնը հաղորդում է կ. Պոլսից, դեկտեմբերի 24-ից, թէ Դիարբէքիրում երեք օր առաջ նորից մի մեծ սարսափ տիրեց: Ժողովուրդը փախաւ և ապաստանվեց եկեղեցիներում: Զինուորական հրամանատարի և Աբդուլլա-փաշայի ազդու վարմունքը վերջ տուեց քիւրդերի քաշագործութիւններին:

«New-Iork-Herald» լրագրի մէջ կարդում ենք. «Միացեալ-Նահանգների կ. Պոլսի դեսպան Տերրելի առաջարկութիւնների պատճառով, Կլիվլէնդ նախագահի կառավարութիւնը կը պնդի այն բանի վրա, որպէս զի Թիւրքիան լիակատար բաւարարութիւն տայ այն վնասի համար, որին ենթարկվեցին ամերիկական հոգևոր միսսիաները և միսիօներները: Նախ քան այդ առաջարկութիւնը Բ. Դրան ներկայացնելը, Թիւրքիայում ապրող բոլոր ամերիկացիներին կառաջարկեն դուրս գալ օսմանեան կայսրութեան սահմաններից: Ծովապետ Սէլֆրիջ՝ Տերրել դեսպանի հետ միասին, ամեն միջոցներ ձեռք է առնում թեթևացնելու ամերիկացիների ելքը Թիւրքիայից. ցանկացողներին դրամական միջոցներ ևս կը տրվեն:

«Միացեալ-Նահանգների կօնգրէսին նորերս արված հաղորդութեան համաձայն, օսմանեան կայսրութեան մէջ ապրում են 172 ամերիկական միսիօնարներ, ինչպէս և մի քանի ամերիկական վաճառականներ և Միացեալ-Նահանգների քաղաքացու իրաւունք ձեռք բերած թիւրքեր: Բոլոր միսիօնարները կենդանի են և առողջ, բայց նրանց դոյքը ոչնչացել է զանազան տեղերում, ի թիւս որոց Խարբերդում և Մարաշում: Միայն վերջին քաղաքում ամերիկական միսիօնարութիւններին պատկանող վնասները կէս միլիօն ֆրանկի են հասնում:

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԵՒ ԹԻՒՐՔԻԱՆ

«Standard» լրագրում տպված է հետևեալ հեռագիրը կ. Պոլսից.

«Կարծում են, որ ռուսաց դեսպան Նէլիդովի վերջին ունկնդրութիւնը սուլթանի մօտ աւելի նշանաւոր գործերի համար էր, քան այն ընծաները, որ Աբդուլ Համիդը ուղարկեց ռուսաց Կայսրին: Այդ ունկնդրութիւնը կապում են ֆինանսական ընաւորութիւն ունեցող բանակցութիւնների հետ, որոնց շնորհիւ Ռուսաստանը յոյս ունի հասնել այն նպատակին, որին նա ձգտում է: Միւս պետութիւնների դեսպանները, իրաւ է, դիմադրում են, որ ռուսաց նաւթային մենաւաճառութիւնը մտցնվի Թիւրքիայում, որ զուրկ է իրաւաբանական որ և է հիմքից:

«Այն հարցը, թէ արդեօք ի նկատի կայ դաշնագիր կապել Ռուսաստանի և Թիւրքիայի մէջ,—իսկապէս մեծ նշանակութիւն չունի, որովհետև առանց դրան էլ ընդհանուր համոզմունք է տարածված, որ եթէ որ և է պետութիւն կամենայ յարձակում գործել Թիւրքիայի վրա, Թիւրքիան կարող է յոյս դնել Ռուսաստանի օգնութեան վրա:

«Թիւրքաց ֆինանսների դրութիւնը այնպէս է, որ երբ անցեալ շաբաթ իւրաքանչիւր նահանգից պահանջվեց 20,000 օսմանեան լիրա, զօրքերին ռոճիկ բաժանելու համար՝—այդ պահանջը միմիայն Զմիւռնիայի նահանգը կարողացաւ կատարել: Զօրքերին վատ և անբաւարար մթերքներ հայթայթելու պատճառով, նրանք մեծ թիւով կոտորվում են:»

ԲՕԶԲԷՐԻԻ ՆԱՄԱԿԸ

Լրագիրներում հրատարակված է նախկին առաջին մինիստր Բօզբէրիի հետևեալ նամակը.

«Զը նայելով Սալսբիւրիի կտրական խօսքերին, Անգլիայի բողոքը հայոց հարցի առիթով առանց հետևանքի մնաց, նրա միջամտութիւնը ունայն անցաւ, նրա սպառնալիքները առանց ուշադրութեան թողվեցին: Անգլիայի դիւանագիտութիւնը, ըստ երևոյթին, ուժասպառ է եղած, այն ինչ հայոց սարսափները չարունակվում են: Կառավարութիւնը, ըստ երևոյթին, դժուարութիւնների հանդիպեց. երևի, նա ստիպված էր երկուսից մէկը ընտրել—կամ բարձիթողի անել հայերին կամ մտածել եւրօպական պատերազմի մասին: Ես պէտք է հէնց իրանից՝ կառավարութիւնից լսեմ արդարացնող փաստեր, նախ քան դատավճիռ արձակելը, և ես սպասում եմ պարլամենտի նիստերի բացվելուն»:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, դեկտեմբերի 17-ին

Ատրպատականի հայ ժողովուրդը պարսից Շահի դէպի ինքն ունեցած անսահման սիրոյ առիթով՝ մի շնորհակալական հեռագիր ուղղեց թէհրան: Այսօր սադրազամի միջոցով հետևեալ պատասխանն ստացվեց.

«Ձեր հեռագիրը Նորին Վեհափառութեան յայտնեցի. բովանդակութիւնը բարձրագոյն ուշադրութեան արժանացաւ: Նորին Վեհափառութեան հրամանով յայտնում եմ, որ կայսերական բարեհաճ գթասրտութիւնը, ողորմածութիւնը և պաշտպանութիւնը ծաւալած է Իրանի բոլոր հպատակների վրա: Ու կրօնների խտրութիւնը նրա աչքում ոչ մի նշանակութիւն չէ ունեցել՝ ձեզ ամենիդ փորձով յայտնի է: Դուք Նորին ողորմածութիւնը մուսուլմանների հետ ախտիր վայելել էք, դուք ձեր կեանքը, գոյքը և պատիւը միշտ մինչ ցարդ կատարելապէս ապահով և պաշտպանած էք եղել: Յատկապէս ձեր միամտութեան համար գրում եմ, որ մինչ օրս դուք Նորին Վեհափառութեան տրամադրութիւնը չփոթելու ոչ մի առիթ չէք տուել: Ինչպէս, յուսով եմ, որ ձեր դէպի Շահն ունեցած անսահման սէրը ձեզ ձեր բարի ցանկութիւններում հաստատ կը պահէ, և աղատ կը մնաք այնպիսի վարմունքից, որը, Տէրը մի արասցէ, կարող է պատճառ լինել Նորին Վեհափառութեան հայրագութ շնորհների պակասելուն:»

Արտաւազդ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Ռաշտ, դեկտեմբերի 17-ին

Ռաշտ-Թէհրանեան խճուղին չինվում է մեծ եռանդով և այժմ մօտ 16 վերստ տեղ պատրաստ է։ Սակայն խոչընդոտներ դեռ ևս պատահում են, ի հարկէ, պարսիկ կրօնապետների կողմից։

Մի քանի շաբաթ սրանից առաջ Նահանգապետի մօտ ժողով (մէջլիս) կար, ուր ներկայ էին այստեղի ռուսաց հիւպատոսը, ճանապարհների ընդհանուր կառավարիչը և մի քանի պարսիկ կրօնապետներ։ Այդ ժողովում որոշվեց այն հողերի արժէքը, որտեղից անցնում էր խճուղին, բայց կալուածատէր մի կրօնաւոր գոհ չէր իր հողի համար որոշված արժէքից (գուցէ այդ միայն պատրուակ է), և հրամայում է իր հպատակ գիւղականներին՝ քանդել ճանապարհի մի մասը, որը և շատ նչչին լինելով՝ անուշադիր են վերաբերվում և կրկին անգամ չինել են տալիս։ Բայց մի և նոյն մօլլան երկրորդ անգամ քանդել է տալիս դարձեալ մօտ 10 սաժէն տարածութիւն։ Այս անգամ կառավարութիւնը սառնութեամբ չէ վերաբերվում։ Նահանգապետի որդին և ռուսաց հիւպատոսը գնում են և ձերբակալել տալով գիւղացիներին, բանտարկում են և մօլլային տուգանքի ենթարկում...

Մի քանի շաբաթ այդ դէպքից առաջ մի խըռովութիւն էլ առաջացել էր ճանապարհի վրա բանող պարսիկ մշակների մէջ։ 5—6 հարիւր բանտորներ ընդհանուր բողոք բարձրացնել՝ պահանջում էին իրանց վարձը աւելացնելով չատ այս ու այն կողմ ընկնելով՝ երբ տեսան, որ իրանց բողոքը լսող չը կայ՝ պատճառաբանելու, իբր թէ ռուսները իրանց երկու ամսվայ վարձի կէս մասը կամենում են կտրել. ապա մի սէյիդի յորդորմամբ բոլորը ժողովվեցին, մէջիդում «բաստ» մտան և «Եա Ալի, Եա Ալի»... վայրենի աղաղակով իբր օգնութիւն էին հայցում։ Խռովութիւնը վերջացաւ նրանով՝ որ կառավարութիւնը նրանց խմբապետին փայտի հարուածների ենթարկելուց յետոյ, մի քանի ժամ բանտում պահեց և ապա ստիպեց գնալ պայմանաւորված վարձն ստանալ և աւելին չը պահանջել։ Հաւանական է, որ այս ևս նպատակով սարքած լինի։

Պարսիկ ամբոխի մէջ մի ընդհանուր տրտունջ է երևում։ Մենք անցեալները մէկի հետ խօսակցութիւն ունեցանք նրա կարծիքն իմանալու։ Մեր հարցին—թէ ինչ վնաս է, միթէ ճանապարհ ունենալը վատ բան է—պատասխան ստացանք. «Ճանապարհը ինչպէս ի բնէ եղել է՝ պէտք է թողնել, որ այնպէս էլ մնայ, և ինչ եղանակով մինչև այժմ երթևեկութիւնը եղել է, թող մի և նոյն կերպով էլ մնայ, որովհետև դա Աստուծուն ընդդէմ է. և վերջապէս ինչու համար, եթէ ճանապարհ ունենալը անհրաժեշտ է, ինքը Շահը չէ չինել տալիս, այլ թոյլ է տալիս, որ մի այլակրօն դայ իր երկրի մէջ ճանապարհ չինի»։

Տեսէք, թէ ինչ աստիճանի է հասել պարսկի մոլեռանդութիւնը և հակակուլտուրական հակումը։

Անցեալները Պարսկաստանի յայտնի վաճառական Թումանեանցների որդին, Վարդան Թումանեանցը, գալով այստեղ՝ այցելեց հայոց դպրոցը և դպրոցական չէնքի անյարմարութիւնը տեսնելով՝ հոգաբարձուների և ուսուցչի ներկայութեամբ խոստացաւ, ի յիշատակ իր հանգուցեալ մօր, առաջիկայ գարնանից կառուցանել իր հաշվով երկսեռ դպրոցների չինութիւնը։ Նոյնը խոստացաւ և նրա հայրը, որը թէհրանից վերադառնալով՝ այս օրերս անձամբ նայեց և որոշեց դպրոցի չինութեան տեղը։ Պարոնները արժանի են չնորհակալութեան։

Ս.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Լոնդոնի լրագիրները հաղորդում են, որ Անգլիայում Ստեսլնեակ կեղծ անունով յայտնի ռուս պետական յանցաւորը յանկարծ ընկաւ երկաթուղիական գնացքի տակ և մեռաւ։ Նրա իսկական ազգանունն է Կրաչկովսկի։ Նա 1873-ին դաշոյնով սպանեց գեներալ-ադիւտանտ Մեզենցեվին, օր ցերեկով, և աղատվեց նախօրօք պատրաստված կառքով։ Յետոյ նա փախաւ արտասահման և ապրելով Անգլիայում, անգլիական ամսագիրներում չատ յիմարութիւններ էր գրում Ռուսաստանի մասին։

—Կ. Պոլսից հեռագրում, որ կրիտացիները դիմեցին հիւպատոսներին և հարցրին, թէ կարող են արդեօք նրանք յոյս դնել եւրոպացիների որ և է օգնութեան վրա։ Դիպլոմատիական շրջաններում այն կարծիքն է տիրում, թէ սպասվող բացասական պատասխանը կը նպաստի կրիտացիների չարժման դադարելուն։

—«Times» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը հաղորդում է, թէ Սոֆիայից չատ վատ տեղեկութիւններ են ստացված։ Զօրքերի մէջ տարաբախիկ հիւանդութիւններ են երևում։ Դրուժների վարմունքը սպառնալի կերպարանք է ընդունում։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Նոր տարու առիթով մենք վաղօրօք պօստին յանձնեցինք մի քանի բարեմաղթութիւններ, որոնք չնորհիւ պօստային վարչութեան նոր կարգադրութեան, այսօր առաւօտ անվրէպ հասած կը լինեն այն անձանց ձեռքը, որոնց նրանք ուղղված են։ Բազմաթիւ բարեմաղթութիւններից մենք առաջ կը բերենք այստեղ մի քանիսը։

Աշխարհիս քրիստոնեաներին—քրիստոնէական զգացմունք։

«Արձագանքի» ընթերցողներին—ակնոցներ՝ ամեն բան իր իսկական գոյնով, էութեամբ և մեծութեամբ տեսնելու համար։

«Շաւիղի» խմբագրութեան—չաւիղը չը կորցնել։

«Ասող Արեւելեանի» հիմնողներին՝ մի երրորդ թերթ Թեհրանում, որ դատաւոր հանդիսանայ ներկայ երկու թերթերի վրա։

Երկաթուղու վարչութեան պաշտօնեաներին՝ մէկ. մէկ էլ ճանապարհորդութիւն երրորդ կլասով։

Թիւրքաց գանձարանին՝ խորհուրդ ենք տալիս դրամ ձեռք բերելու համար տպագրել հայերէն օրացոյցներ, որոնք ամենաթանգ ապրանքն են այժմ Կ. Պոլսում և ծախվում են հատը մի մի ռուբլով։

Կենտրբերիի եպիսկոպոսին՝ օրինակ վերցնել և ընծայարաններ բանալ Բրիտանիայում՝ հոգեորականներ պատրաստելու համար։

Շուշու նորընտիր հոգաբարձուներին՝ մի դիմացկան ցախաւել։

Բժիշկներին՝ գործածեցէք նոր տեսակի մօդային մի դեղ միտինգ անունով, որ ամերիկացիները և անգլիացիները գործ են ածում վերքեր առողջացնելու համար։

Պրոֆեսոր Սողոմոն Եղիազարեանին՝ չնորք անիրաւաբանական մտքեր չը յղանալու և չը յայտնելու։

«Մշակին» մուտք Թիւրքաց-Հայաստան և Էջմիածնի ճեմարան։

Հայքահանաներին՝ մի այնպիսի հրաչք, որ կարողանան կարդալ, գրել և քարոզել։

Թիւրքահայերին՝ մեռելեայ օրգանիզմ։

Քաղցած բօրենիներին՝ չուտաքայլ երթալ դէպի բեֆօրմների աչխարհը։

Ռուսական հեռագրական դրծակալութեան՝ խելք և խղճմտանք կարդին հեռագիրներ կազմելու գաւառների համար։

Կատակ սիրողներին՝ չնորհաւոր նոր տարի։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՎԼԱԴԻՎՕՍՏՕԿ, 26 դեկտեմբերի։ Եօկօհամայից հաղորդում են, որ եապօնական կառավարութիւնը առաջարկեց ռուսաց զինուորական նաւերին ազատ կանգ առնել իր բոլոր նաւահանգիստներում, առանց սահմանափակելու նաւերի թիւը։ Այդ առաջարկութիւնը, ըստ երևոյթին, արված է՝ Ռուսաստանին գրաւելու համար, որպէս զի նա հրաժարվի նաւահանգիստ ձեռք բերելու դիտաւորութիւնից՝ Կորէյեան թերակղզու վրա։

ՊԱՐԻԶ, 28 դեկտեմբերի։ Պրէտորիայի ֆրանսիական հիւպատոսը հաղորդում է, որ Եօհանէսբուրգի բնակիչների մի մասը, որը զէնք էր առել Ջէմսօնի զօրաբաժնի չարժման պատճառով, անպայման անձնատուր եղաւ յունվարի 7-ին։

ԼՕՆԴՕՆ, 18 դեկտեմբերի։ Ջէմսօն, խօսելով «Central News»-ի թղթակցի հետ, ասեց, որ արշաւանքն սկսեց այն ստիպողական հրաւէրների և համոզմունքի հիման վրա, թէ անգլիական կանայքը և երեխաները վտանգի մէջ են գըտնվում։ Ջէմսօնի զօրաբաժնի մէջ եղած մարդիկը պատերազմում էին մինչև ուժասպառ լինելը։

Անգլիայում օրից օր աճում է համակրութիւնը դէպի Ջէմսօնը և մի և նոյն ժամանակ թշնամական վերաբերմունքը դէպի գերմանացիները։ Սիտիում արձակում են գերմանացի գործակատարներին։ Նկատելի է, սակայն, սաստիկ դիմադրական հոսանք։ Պարնէլականները այդ նըպատակով կազմված բանկէտներում ճառեր են արտասանում ի պաշտպանութիւն բօէրների։

Նախագահ Կրիւգէր կէս միլիոն պատերազմական տուգանք է պահանջում։

ԼՕՆԴՕՆ, 28 դեկտեմբերի։ Լրագիրների ասելով, անգլիական նաւատորմը դուրս գալով Կապզդաքից՝ մտել է Դէլագոս ծոցը։

ԼՕՆԴՕՆ, 28 դեկտեմբերի։ Կապեան կոլօնիայի ընդհանուր-նահանգապետը զեկուցանում է, թէ Տրանսվալի անգլիական գործակալը առաջարկել է Կրիւգէրին, որ Տրանսվալական կառավարութիւնը, բէֆորմների կոմիտէի հետ միասին, ձգտի վերականգնել երկրի կանոնաւոր վիճակը Եօհաննէսբուրգում, որը, առանց նեղութեան, կարելի է կատարել մի քանի օրում։

ԼՕՆԴՕՆ, 28 դեկտեմբերի։ Տրանսվալ մտնելու նպատակով գերմանական նաւատորմների Լորենցօ-Մարկէցում ապ իջնելու մասին, «Times» լրագիրը ասում է. «Այդպիսի ձեռնարկութիւնը ծովային աւազակութեան աւելի մեծ ակտ է, քան Ջէմսօնի ասպատակութիւնը, որովհետև նա կատարվում է օրինաւոր կառավարութեան ձեռքով»։ «Times» չէ հաւատում, որ Պորտուգալիան մատակից լինի այդ ծրագրին, բայց հնարաւոր է համարում, որ Պորտուգալիային արված է առաջարկութիւն՝ համաձայնվել այդպիսի ոչ օրինական վարմունքի հետ, որն ուղղված է իր բարեկամ Անգլիայի դէմ։ Հիմնական պատճառ կայ կասկածելու, որ արդէն մի քանի ժամանակից ի վեր Գերմանիան պատրաստվում էր հարուած հասցնել Անգլիային ծածուկ և որ դրա համար առաջուց ընտրված էր Տրանսվալը։ Դրանով բացատրվում է այն անյողդողդ յամառութիւնը, որով բօէրները մերժում են բաւարարութիւն տալ օտարականների ամենահամեստ պահանջներին։ Իր յոդուածը «Times» վերջացնում է հետևեալ խօսքերով. «Աշխարհս քրիստոնական սխալները դեռ ևս արդարացուցիչ չարժառիթներ չէ համարում գերմանական կայսրի համար՝ ինքնագլուխ կերպով պատառ պատառ անել Անգլիայի կնքած դաշնագիրները։»

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 դեկտեմբերի։ Հրատարակված է 1896 թ-ի նախահաշիվը. սովորական եկամուտ հաշված է 1,239,4 միլիոն ռուբլի. սովորական ծախս—1,231,9 միլիոն ռուբլի։ Արտակարգ եկամուտ—22 միլիոն ռուբլի. արտակարգ ծախս—8,4 միլիոն ռուբլի։

ԹԷՀՐԱՆ, 29 դեկտեմբերի։ Դեկտեմբերի 21-ին և 24-ին սաստիկ երկրաշարժ եղաւ։ Կոտորվել են բազմաթիւ մարդիկ, տաւար, ոչխար։ Խալխալի շրջաններում փլատակների տակ են մնացել 300 հոգի, Գոյ (?) քաղաքում—800 հոգի։

Կ. ՊՕԼԻՍ, 30 դեկտեմբերի։ Կազմվում է մի յանձնաժողով սուլթանի նախագահութեամբ՝ օգնութիւն հասցնելու համար ասիական վիլայէթներում վերջերս վնասվածներին։ Օգնութիւնը տրվելու է թիւրքերին և քրիստոնեաներին։

ԼՕՆԴՕՆ, 30 դեկտեմբերի։ Պորտուգալիան մերժեց գերմանական կառավարութեան խնդիրքը նրա երկրի միջով Պրէտորիա զօրք ուղարկելու թոյլտուութեան մասին։

ՇԱՆԽԱՅ, 30 դեկտեմբերի։ Սէուլից հաղորդում են, որ եապօնացիները ստիպեցին Կորէյի թագաւորին թողնել պալատը։ Երկու կորէյցիներ գլխատվեցին՝ իբրև մատակից թագուհու սպանութեան։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

Դեկտեմբերի 29-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արժէ . .	93 ր.	80 կ.
Բերլինի վրա 100 մարկ — . .	45 »	67½ »
Պարիզի վրա 100 ֆրանկ — . .	37 »	17½
Ոսկի — — արժէ . .	7 »	50 »
Մաքսային կուպոններ — .	150 »	— »
Արծաթ — — — . .	— »	— »
Բօրսային դիսկոնտ — . .	6½	7½%
4% պետական բէնտա	97⅞ »	— »
5% ոսկեայ բէնտա 1884 թ. . .	159 »	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.	281 »	— »
— — երկրորդ —	241 »	50
5% դրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	209½ »	— »
5% պետական երկաթուղ. բէնտա	100 »	— »
4% ներքին փոխառութեան . . .	97½ »	— »
4½% դրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	100 »	25 »
Ազն. կալ. Պետ. բանկի խաղարկութ		
4½% Վկայակ. գիւղ. հող. բանկի	100 »	— »
Փոխ. կրեդիտ. ընկեր. մոսալ.	152 »	— »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ.		
ընկերութեան օբլիգացիաները.	100 »	50 »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	100 »	25 »
Ոդեսայի — —	99 »	75 »
Թիֆլիսի — —	98 »	— »
Դրաւ. թղթ. Թիֆլ. կալ. բանկի 6%	101 »	— »
— — — 5% . .	98 »	— »
— — Քութայիսի 6% . .	101 »	— »
— — — 5% . .	98 »	— »

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ
ժողովեց
ՑՈՎՀԱՆՆԷՍ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ
ԳԻՆՆ Է 50 ԿՕՊ.
Վաճառվում է կենտրոնական գրավաճառանոցում։ (№ 138) 9—9

ԽԻԶԱՆԻ եղունց գիւղացի Սարոյի որդին, Յովհաննէս անունով, որը անցեալում կը ծառայէր Լիմ անապատում, վեց տարուց աւելի է անյայտացել է, և յայտնի չէ իւրայնոց թէ ուր կը գտնվի։ Այժմ նրա եղբայրը Վարդանն լինելով Թիֆլիսում, Սալդաթսկի բազարում, Բուղդանովի տան եղող Մաշխասի տրակտիրում, կը խնդրէ, որ ում յայտնի է նրա մասին մի բան կամ ուր գտնվելը՝ յայտնեն նրան ի գիտութիւն։ (№ 145) 3—3

Լոյս տեսաւ
ՄԱՆԿՈՒԹԻՒՆ
(Պատկերների ժողովածու)
Գինը 40 կօպ.
ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ
Գինը 10 կօպ.
Կազմեց Զ. Գրիգորեան
Դիմել Тифлисъ, книжная торговля З. Грикурова. (№ 148) 3—4

ԲԺՇԿԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԱՐԱՆ
ԴՕԿՏ. Ա. ԲԱԲԱՑԵԱՆԻ
Սերգիեվսկայա փողոց № 14.
Ցերեկը 2—3 ժ. կանայք և մանուկներ։
Երեկոյեան 6—7½ ժ. տղամարդիկ։

Ներքին և ջղային հիւանդների համար, բացի դեղերից, գործադրվում են նաև զանազան տեսակ ջրա-էլեքտրա-բուժական և այլ ֆիզիկական մեթոդներ (մասաժ և այլն)
(№ 124) 18—20

Լոյս է տեսել Մոսկվայում „ՍՈԽԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ“ անունով ազգային լիակատար երգարանի առաջին հատորը, շորորդ տպագրութեամբ, և շուտով կուղարկվի բաժանորդներին“։
(№ 147) 2—3 Գրիգոր քահանայ Գրիգորեանց

Շուտով մամուլի տակ կընկնի
„ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԲԺՇԿԱՐԱՆԻ“
ԵՐՐՈՐԴ ԳԻՐՔԸ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ։ 1) Վեներականախտեր։ Սիֆիլիս, կակուղ չանկր, սուսուռակ. 2) Ե՞րբ կարող են ամուսնանալ սիֆիլիսոտ հիւանդները. 3) Միզապարկի հիւանդութիւնները. 4) Միզապարկի քարախտը. 5) Արանց և կանանց սեռական անկարողութիւնը։
Խնդրում եմ այն բաժանորդներին, որոնք փոխել են բնակութեան տեղերը, հաղորդեն ինձ իրանց նոր հասցէները։
Իմ հասցէն՝ ЕЛИСАВЕТОПОЛЬ, помощнику Елисаветопольскаго губернскаго врача доктору Медицины Теръ-Григорьянцъ.
(№ 147) 3—3

Մեծ Արժանաւորութեան
ՀՈՏԱԻԷՏ ՁՐԵՐ
„Պարսկական Եաստման“
Ծաղկահոտ Օ-դէ-կոլոն
„Պարսկական Եաստման“
Հոտաւէտ Ջրեր „Պարսկական Եաստման“
Սապոն „Պարսկական Եաստման“
Պոմադա „Պարսկական Եաստման“
Ընկերութիւն
ԲՐՕԿԱՐ ԵՒ ԸՆԿ.
Պրէյս-կուրանտը ձրի։
(ամ. 30) (№ 73) 8—12

Վաճառվում են
ՌԱՓԱՑԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆԻ
ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
Գինն է, երկու հատորի, 4 ՌՈՒԲԼԻ։
Դիմել՝ Нахичевань на-Дону, Христофору Христофоровичу Чалхушяну.
(№ 136) (յ.) 8—10

ԲԵՌՏԷՏ ԵՒ ԸՆԿ.

ՊԱՍՏԵՕՐԻ ՍԻՍՏԵՄՈՎ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԲՕԺՕԺԻ ՍԵՐՄԸ

Բաղդադի սպիտակ բօժօժից, Սարդինիայի և Ֆրանսիական դեղին բօժօժից։

Առևտրական տունը, որ գոյութիւն ունի 1868 թւից՝ պատիւ ունի յայտնելու շերամապահներին և ցանկացողներին, որ պայմանի և գնի մասին պէտք է դիմել ԲԱԹՈՒՄ եղբ. ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆՑՆԵՐԻՆ հեռնեալ հասցէով.—

ԲԱԹՈՒՄԸ, Եր. Մնացականեանց. (№ 1) (Ե.) 1—8

ТИФЛИССКАЯ ТАМОЖНЯ доводитъ до свѣдѣнія чаеторговцевъ, что нераспроданный въ текущемъ году чай въ картузахъ неоклеенныхъ казеннымъ бандеролемъ, обязательно долженъ быть представленъ въ таможню до перваго января 1896 г. для обандероленія. (№ 150) 2—3

ОТКРЫТА ПОДПИСКА НА **1896** ГОДЪ

на ежедневную политическо-общественно-литературную газету

„ЧЕРНОМОРСКІЙ ВѢСТНИКЪ"

(ВТОРОЙ ГОДЪ ИЗДАНІЯ)

Органъ Черноморья и Закавказья «Черноморскій Вѣстникъ»—первая и единственная на всемъ обширномъ восточномъ побережьи Чернаго моря газета—выходитъ ежедневно, за исключеніемъ послѣпраздничныхъ дней, по полной программѣ столичныхъ политическо-общественныхъ ежедневныхъ изданій.

Подписная цѣна: на годъ—для городскихъ подписчиковъ, съ доставкой, 6 руб.,—для иногородныхъ, съ пересылкой, 7 руб.,—за границу 13 руб.; на полгода—для городскихъ 4 руб., для иногородныхъ 5 руб., за границу 9 руб.; на одинъ мѣсяцъ—для городскихъ 1 руб., для иногородныхъ 1 руб. 20 коп. Разсрочка платежа—по соглашенію съ конторой изданія.

Тарифъ объявленій: на 4-й страницѣ, за мѣсто, занимаемое строкою петита, съ мѣстныхъ объявленій—8 коп., съ иногородныхъ—10 коп.; на 1-й страницѣ—вдвое. При многократныхъ объявленіяхъ—скидка.

Объявленія изъ за-границы и Россійской Имперіи, за исключеніемъ Кавказа, Закавказья и Закаспійской области, принимаются исключительно въ Центральной конторѣ объявленій тоговаго дома Л. и Э. Метцль и К°, въ Москвѣ (Мясницкая, домъ Сытова) и въ Петербургѣ (Большая Морская 11).

Городскіе и иногородные подписчики благоволятъ адресоваться непосредственно въ КОНТОРУ „ЧЕРНОМОРСКАГО ВѢСТНИКА", БАТУМЪ.

1—5 Редакторъ-Издатель *Г. А. Пальмъ*

ОТКРЫТА ПОДПИСКА НА **1896** ГОДЪ

на ежедневную, политическую, литературную, научную, общественную и коммерческую газету

„ОДЕССКІЯ НОВОСТИ"

ПОДПИСНАЯ ЦѢНА:

Безъ доставки: На 1 мѣсяцъ—90 к., на 3 м.—2 р. 50 к., на 6 м.—4 р. 50 к., на годъ—8 р. **Съ доставкою**: на 1 мѣсяцъ—1 р., на 3 м.—2 р. 75 к., на 6 м.—5 р., на годъ—9 р. **Съ пересылкою въ другіе города**: На 1 мѣс.—1 р. 10 к., на 3 мѣс.—3 р., на 6 мѣс.—5 р. 50 к., на годъ—10 р.

За границу доплачивается къ подписной цѣнѣ 60 коп. въ мѣсяцъ. Для годовыхъ подписчиковъ допускается разсрочка во взносѣ подписной платы для иногородныхъ: при подпискѣ 5 руб. и до начала второго полугодія 5 руб.; для городскихъ—при подпискѣ 5 руб. и до начала второго полугодія 4 руб.

ПОДПИСКА ПРИНИМАЕТСЯ: Въ Одессѣ: *Въ Главной Конторѣ, на углу Ришельевской и Греческой, въ домѣ № 10/24.*

1—3 Редакторъ-Издатель А. П. Старковъ

ԲԱՑՎԱԾ Է

Կրօնական—բարոյական, գրականական—պատմական, բանասիրական—մանկավարժական, ազգային և պաշտօնական

„ԱՐԱՐԱՏ"

ԱՄՍԱԳԻՐ 1896 ԹԻՒ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Առաջիկայ տարին «ԱՐԱՐԱՏ» ամսագիրը կը հրատարակվի նոյն ծրագրով և աւելի մեծ ծաւալով (3 թերթ)։ Առանձնապէս ճոխ կը լինեն մանկավարժական և ազգային բաժինները։ Տարվան վերջը բաժանորդները կը ստանան իբրև նուէր մի հարուստ ժողովածու 8—10 թերթից բաղկացած։

«ԱՐԱՐԱՏ»-ի համարները լոյս կը տեսնեն իւրաքանչիւր ամսուան սկզբին։

«ԱՐԱՐԱՏ»-ին բաժանորդ գրվել ցանկացողները պիտի դիմեն խմբագրութեանս հեռնեալ հասցէով. Эчміадзинъ. Редакція журн. Араратъ. Etshmiadzin (Russie, Caucase) Rédaction du journal Ararat.

Տարեկան գինն է Ռուսաստանի բոլոր քաղաքների համար 4 ռուբլի։ Իսկ արտասահմանի համար 5 ռուբլի։

(№ 148) 1—3

ԲԱՑՎԱԾ Է

„ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅԻ"

1896 ԹԻՒ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

(10-ՐԴ ՀՐՋԱՆ)

«Հանդէս» այս հրջանին մէջ ալ կը հրատարակուի նոյն ծրագրով և նոյն ուղղութեամբ։ Ինն տարուան հրջանը՝ ուրախութեամբ կը ընու զիմքագրութիւնս, տեսնելով թէ Յրդ. Բաժանորդք և ընթերցողք աղնութեամբ գիտցան յարգել իւր աշխատութիւնն. յայտնի ապացոյց են ասոր մեր Յրդ. պատուական լրագրաց տասնամեայ հրջանին մէջ գրած քաջալերականներն և մանաւանդ մեր թերթը ծանօթից հրջանակին մէջ տարածելու փայթն ու ջանքը, որոնց հնարիւ «Հանդէս» ոչ թէ միայն ի վիճակի կըլլայ իւր ուղղութեամբ ընթանալու, այլ նաև ես քան զես իւր նիւթերն բազմակողմանի ընծայելու։ 9-րորդ հրջանը փակելու առեն ուրեմն խորին շնորհակալութիւն նախ Յրդ. Բաժանորդաց և երկրորդ այս ծանր գործին մէջ հմտական ուսումնական և զիտական յօդուածներով քաջալերող գործակիցներուն և թղթակիցներուն։

Շնորհակալութիւն նոյնպէս մեր Յրդ. Գործակալաց, որ ամենայն ճշդութեամբ և կանոնաւորութեամբ գոհ ըրած են թէ Յրդ. Բաժանորդներն և թէ «Հանդիսիս» խմբագրութիւնն և ապահով ենք որ իրենց թանկագին գործակցութիւնն այսուհետև ալ պիտի չը զլանան մեզի։

Բաժանորդ գրուիլ ցանկացողները կրնան դիմել մեր գործակալաց կամ ուղղակի խմբագրութեան։

VIENNE (Autriche), Rédaction de la Revue „HANTESS"
VII/2, Mechitharistengasse Nr. 4.

3—4

1895 *թ. նոյեմբերի 10-ից ստացվել է* ՊԱՍՏԵՕՐԻ ՍԻՍՏԵՄՈՎ *պատրաստած*

ԲՐՈՒՍԱՅԻ ԲՕԺՕԺԻ ՍՊԻՏԱԿ ՏԵՍԱԿԻ ՍԵՐՄԸ

որ արդէն անցեալ տարիներից յայտնի է Կովկասում և Պարսկաստանում իր յատկութիւններով, և տուած առատ բերքով, „ԷԿՕՆՕՄԻԴԷՍ" ֆիրմայից։

Ցանկացողները կարող են պահանջել Թիֆլիսի Շերամապահութեան կայարանում՝ քննելուց յետոյ։

Գնել ցանկացողները կարող են դիմել՝ ԲԱԹՈՒՄ, ԹԻՖԼԻՍ, ԲԱԿՈՒ, *եղբ.* ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆՑՆԵՐԻՆ, *իսկ* ՆՈԽԻ՝ *Աղա Մուսայ Մահմէդովին։*

Այս հասցէով. Брат. МНАЦАКАНЯНЦЪ, БАТУМЪ *կամ* ТИФЛИСЪ *կամ* БАКУ.

(№ 138) (Ե. չ.) 10—24

ԳՈՐԾԱՐԱՆ

Գ. ԵՒ Վ. ՄԱՐԳԱՐԵԱՆՆԵՐԻ

Տեսպլիէ Բեադի, Աղէքսանդրովսկայա լինիա № 106—107—108

ՄՕՍԿՎԱՅՈՒՄ

ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ՄԵՏԱՔԻՍ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ

Սաղա և ծաղկաւոր մախմուր, պլիուշ, լենտ-զօտիկ, ճակատանոց, գլխի աղլուխ, բարձի երես, պլիուշի գորգ, ֆուվիար, բուրսա, լուստրին և այլն։

ՊԱՀԵՍՏ ԹԻՖԼԻՍՈՒՄ. Դանօվսկայա, № 31, Յ. Գ. Մարգարեանի մօտ։

(№ 79) 7—10

ԿՐԱԿԻ ԴԷՄ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Ապահովագրում է ամէն տեսակ շինութիւններ Թիֆլիս քաղաքի մէջ

ՏԷԼԷՖՕՆ № 288

Վարչութիւնը գտնվում է քաղաքային տանը, Երևանեան հրապարակի վրա, և բաց է առաւօտեան 9 ժամից մինչև $2^1/_2$-ը կէս օրից յետոյ։

Մուտքը Վէլիամինովսկայա փողոցից, քաղաքային դումայի պօդէզդով։

(№ 90) (Հ.) 17—20

Ներկայ դեկտեմբեր ամսին լոյս կը տեսնի

„ԱՐՕՐ" ՏՊԱՐԱՆԻ

ՕՐԱՑՈՅՑՆԵՐ 1896 Թ.

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԴԵՂԵՑԻԿ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ, ՏՊԱԳՐՎԱԾ ՆՈՐ ՏԱՌԵՐՈՎ

1) ՄԵԾԱԳԻՐ ՍԵՂԱՆԻ *օրացոյց։ Բացի բազմաթիւ տեղեկութիւններից, իբրև յաւելուած, ունի* ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ, *բազմաթիւ պատկերներով զարդարած։*

ԳԻՆԸ 70 ԿՕՊԷԿ

Շքեղ, ոսկեզօծ կազմով—1 ռուբլի 20 կօպէկ։

2) ՓՈՔՐԱԳԻՐ, *գրպանի օրացոյց, որի մէջ զետեղված են* Պետրոս Դուրեանի, Յակոբ Պարոնեանի, *Հանդուցեալ Ներսէս պատրիարքի և այժմեան Իզմիրլեան պատրիարքի պատկերներն ու կենսագրութիւնները։*

ԳԻՆԸ 15 ԿՕՊԷԿ

Շքեղ, ոսկեզօծ կազմով—25 կօպէկ։

Ցանկացողները թող վաղօրօք դիմեն՝ Баку, типографія «Араръ». 3—3

ՀԱՅ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ

Լուսանկար Տէր-Ղեոնդեանի մօտ վաճառվում են հետեւեալ հայ գործիչների պատկերները՝

Հոգեորականներ.—հինգերորդ դարու գործիչներից՝ ՍԱՀԱԿԻ *և* ՄԵՍՐՈՊԻ։ *Ժամանակակիցներից՝* ՆԵՐՍԷՍ V, ԳԷՈՐԳ IV, ՄԱԿԱՐ *և* ՄԿՐՏԻՉ *կաթողիկոսների,* ԳՐԻԳՈՐԻՍ ԱԼԷԱԹՃԵԱՆԻ (*կաթողիկոս Կիլիկիայի*), ՄԱՏԹԷՈՍ ՊԱՏՐԻԱՐՔ ԻԶՄԻՐԼԵԱՆԻ, ԱՐԻՍՏԱԿԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵԴՐԱԿԵԱՆԻ, ԽՈՐԷՆ ՆԱՐՊԷՅԻ *և ուրիշ արժանաւոր հոգեորականների։*

*Նոյն տեղը վաճառվում են.—*ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ, ԲԱՖՖԻ, ՌԱՖԱՅԵԼ ՊԱՏԿԱՆԵԱՆԻ, ԾԵՐԵՆՑԻ, ՍՏԵՓԱՆՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆՑԻ, Յ. ՊԱՐՈՆԵԱՆԻ, Պ. ԱԴԱՄԵԱՆԻ (*բոլոր դերերում նկարված*), ԽՄԲԱԳԻՐՆԵՐԻ, *կենդանի* ԳՐՈՂՆԵՐԻ, *նշանաւոր հայ* ԿԱՆԱՆՑ՝ Ս. ՏԻՍԱԲԻ, ՄԱՐԻԱՄ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ-ԱՐԾՐՈՒՆՈՒ, «ՄԵԱԿԻ» ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ *յօթելեանական ալբոմը, նմանապէս ուրիշ զանազան գործիչների լուսանկարները։*

Վերոյիշեալ պատկերները արժեն՝ մեծագիր 3 ռուբլի, ՄԻԶԱԿ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ 1 *ռուբլի,* ԿԱԲԻՆԷՏԱՅԻՆ *կոչված պատկերները՝* 40 *կօպէկ,* ՎԻԶԻՏ *կոչված պատկերները՝* 20 *կօպէկ։*

Հասցէն՝ ТИФЛИСЪ. Фотографія Теръ-Гевондянца (На Михайловск. мосту). *Ճանապարհածախսը գնողի վրա է։*

(№ 117) 6—10

„ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ"

Պատկերազարդ

ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ ՎԵՐՋԻՆ

Բովանդակութիւն

ԱԶԳԱԳՐՈՒԹԻՒՆ. *Հրատարակչից.—Տեսութիւն Հայ ազգագրութեան.—Մանկացոյց տերութիւնը.—Խոջալուի դերեզմանները.—Խծկօնք.—Կովկասի տեղը քաղաքակրթութեան պատմութեան մէջ, Վիրխովի.—Ջաւախք.—Տեղագրութիւն.—Ընտանեկան կեանք և սովորոյթներ.—Հաւատք.—Աբովեան՝ որպէս ազգագրագէտ։*

ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹԻՒՆ.—*Պետրի, մարդաբանութեան պատմական զարգացումն.—Լետուրնո, Ամուսնութեան զարգացումն.—Կրակի զարգացումն.—Տայլոր, Հիմնարկութիւնների ուսումնասիրելու եղանակը.—Մանր յօդուածներ։*

Գիւղական աղքատ դպրոցները կարող են դիմել մեզ՝ մեր տրամադրութեան ներքոյ գրված նուէրներից ստանալու։

*Խնդրում ենք մեր մեծ. պ.պ. աշխատակիցներին բարեհաճել վերադարձնելու հանդիսիս անդորատեարները մինչև դեկտեմբերի 10.—*Шуша, Е. Лалаянцъ.

3—3 (№ 135) *Հրատարակիչ՝* Ե. Լալայեան

Дозволено цензурою, Тифлисъ, 31 Декабря 1895 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. кав